

VERA



VERA





891.99

7.81

891.981

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՍԵՐ ԵՒ ՎԻՇՏ

ԵԴՈՒՆՐԴ ՊՅԱՆՔԵԱՆ

770

1891

A 79410



Տպարան « ՅՈՅՍ »

1945 — ՊԵՂԴՈՒՄ



ՆԵՐՔԻՆ ԼԱՍԱՐԱԿԱԾ

I

Կ'իջնէ Աստուած ալ շիտակ, ալ ուղղագիծ, ալ առատ,
Հողին վրայ հոգիիս՝

Կը զարնէ ցի'ցն իր կամքին,

Պոսնդապի'նդ կարծրութեամբ.

Լուսակտաւ կը բանայ հոն իր վրանը Գութի:

... Անտառ մը կայ խոովքի՝ կամա՛ր կամա՛ր ու միջին

Արիւնավէժ իմ սրտիս՝

Հեռադրուած ներսի դին.

Կը պղպջան մորթիս տակ,

Միլիօն դեւեր խեղանդամ,

Կը հանեն սե՛ւ գոլորշի:

... Ամեն ցերեկ լոյս պնակ՝

Ջար աստուածներ անոնց մէջ,

Կը թքենն ամպ ու զիշեր,

Կը փսխեն տիղմ ու տականք,

Երգ ու սաղմոս շարաւոտ.

Խաւարն է թուք՝ հի'նգ դելի:

II

Ես մօտ եմ Մեծ Երկնքին, թաթխած ուղեղըս անոր
Շաղախներուն կապուտակ.

Միտքըս ըրած ձգախէժ՝

Ես աստղէ աստղ կ'ը տանիմ

Անոր թելերը բոլոր,

Ըլլալի սարդը կարծես Այրեցեալի Դօտիիս:

... Ոգիներուն ձեռքին մէջ, օրերն են հին խաղաթուղթ,

Մոլորակները իրենց առջեւը սեղան՝

Ուր բաղդախա՛ղ կը խաղան

Անոնք մահուան պատին կից:

... Աղամ, Իւա, սկսան

Սեռային վատ պրիճին,

Հետը օծին ու դեւին,

Յետոյ Կայէն եւ Արեւ ու դեռ Զայն մը երկնքէն

Բացին իրենց պրէֆան,

Դաշտի մը մէջ առանծին:

... Զգուած ամեն ձեւ խաղէ՝

Յիսուն ելաւ խա՛չն ի վեր:...

III

Յեխոտ շեմէն մեր կեանքին, երկու ստուեր դողացին,
Հոն քրտնեցան, հոն լացին,

Ապա թքնե՛լ սկսան

Դէպի եկող ապագան:

Ու մենք թո՛ւքն ենք Աղամին ու մենք թուքն ենք
Եւային,

Անոնց քրտնած, արտասուող մուր ու մորմո՛ք
Ձանձրոյթին.

Նետուած ճակտին օրերուն՝

Որոնք եկան ու կուգան,

Որոնք անվե՛րջ պիտի գան,

Թուքե՛ր ենք մենք թքնուած՝ մեր ցեխ ու լո՛յս
Ժնողքէն:

* * *

Մենք նամակ պզտիկ, մենք տրտո՛ւմ երկտող
Հսկայ բաներու, անհո՛ւն մեծութեանց,

Մեր գիրն է անլոյծ, անընթեռնելի.

Ո՞վ է գրած մեզ, եւ գրած որո՞ւ, եւ գրած ինչո՞ւ

Ստորագրած ի՞նչ:

Ի՞քս մը կը գրէ Ի՞քսի մը ուրիշ

Ու գրուա՛ծն ենք մենք

Կեանքէն մահ գացող, յաւէտ թափառող
Այդ հին ու խաւար,

Մո'ւթ թղթակցութեան:
Կ'ըսեն իրարու, կ'ըսեն մեղմով ինչ,
Յաւերժանքներու արարիչ ուժով
Լեցուած իքսերն այդ՝
Ենթակայ մէկուն, զործակալ մէկուն,
Բացարձակութեամբ միակ Աստըծուն:

IV

Վիշտը իր մուրճն է զարկած
Սրտիս սալին՝ վիշտը կռա'նն է զարկած,
Ու ժայթքած է կարմիր լոյս,
Ժայթքած հրազ. ժայթքած սէր,
Ժայթքած բորբոք արեգակ.
Ու մինչ սալը փշրուած՝
Կ'իջնէ՝ սակայն դեռ այսօր,
Ահեղաթափ եւ հզօր,
Դերագոյն վիշտն անընդհատ
Եւ երգս ծա'յնն է անոր:

ՄՈՒԲԱՑԿԱՆԸ

I

Ան տղայ մըն է: Կամթուա՛ծ սրտով:

Ամառը հազաց վրան կապոյտ հազ. աշունն ու
քամին քերեցին միսը:

Ջմեռը փակաւ մարմնին, որպէս ջղային տգրուկ.

Ան տապկուեցաւ տասներկու տապակներու մէջ,

Տասներկու ամիսնե՛րու.

Ֆունուարէ Դեկտեմբեր քաշեց սեւ գիծ.

Ուրբա՛թը չսիրեց

Եւ ունեցաւ զինք չսիրողներուն դէմ ուրբաթային
տրամադրութիւն:

Պոռնիկ նայուածքներէ դպաւ անոր աչքին խէժ.

Եւ ան տխուր է, դառնատես, դառնաճիտ, դառնոգի.

Լեզուն լեղի՛ խոտի մը պէս է բերնին մէջ

Դուցէ մոլեխինդ.

Եւամած ըլլար ան կարծես բուռ բուռ քինին.

Ու թոքերուն մէջ դրած են խուրձ մը եղին:

II

Տղայ մըն է ան:

Տառապանքին չուանէն ինկած գորշ լարախաղաց:

Ու կը նայի եթերափակ կապոյտին՝

Ուր պիտի տանէր զինք իր տառապանքին
այդ չուանը:

Ինք պիտի ըլլար այն մարդէ վե՛ր մաքուր, որ
կ'ուզէր ըլլալ.

Ինք չէ հիմա նոյնիսկ ան, որ են բոլորը,
Տգեղ, ծամածուռ, ահռելի ծաղրանկար մը.

Ժխտական սեւանկարն է ան դեռ՝

Լուսանկարչական մթասոնեկին խորը, դեղի մէջ,

Եւ իր համար սուգը այդ դեղն է տակաւին.

Բաղդոզիներէն, լոյսէն ու աստուածներէն

Ոն կը մուրայ իր տարահրաշ ու խոր
էութեան

Բո՛ւն, ներքի՛ն, անվերածելի՛ իսկանկարը...:

Եւ իր հոգին՝

Անհունին անջրպետներէն շրջող

Ողորմահայց զանձանա՛կն է ասկէ վերջ:

III

Տղայ մըն է: Իր գոյութեան բոլոր ձեւերէն
վիշախայթուած:

Կը պառկի. կը ծխէ՛, կը ծխէ՛...

Մահը իր նպատակին առաստաղն է

Եւ օղին հեղուկ ակնոց՝

Որուն մէջէն կը նայի ան այդ թանձրամրոտ
առաստաղին՝

Կարօտահար ու բարձ.

Գիտէ, որ մահը կախարիչ մըն է կեանքին եռացող
կաթսային վրայ,

Գիտէ, որ մենք պիտի անցնինք բազմոյոր
խողովակներէ,

Գիտէ, որ մեր զերեզմաններէն պիտի կաթի
մեր հոգին նման ջինջ ալքօլի՝

Շիշերու մէջ ու կարասին՝

Անյատա՛կ Յաւերժութեան:

— Ալքօլամոլ ոգիներ, ալքօլամո՛լ աստուածներ,
որբա՛ն բարի էք, կ'ըսէ:

Եւ ան մութացիկ՝

Կը պաղատի տրուիլը իրեն ականթարթի մ'իսկ համար,

Ալքօլը վիշտին, ալքօլը լոյսին, ալքօլը Լոռութեան...:

IV

Տղա՛յ մըն է. բզբտուա՛ծ նկար. պատուա՛ծ մատեան:

Դեւե՛ր ըրին ատիկա, ըրին մարդիկ. բոզ բա՛ղդը ըրաւ.

Կեանքի իր հզօր կանոնագրին մէջէն Լոյսին
վերաբերեալ՝

Ձնչեցին բոլո՛ր յօդուածները.

Ալ մութ, ալ գիշեր, ալ քամի,

Ալ ձմեռ, ալ ցե՛խ ու աղջամուղջ այդ
կանոնագիրը

Դիւան մըն է սեւ՝ ան ասկէ վերջ.

Իր ընթերցողը կրնայ ըլլալ լոկ բու մը,

Աւերակ ու մահ զննող հոգ'ը բու մը,

Աղէտի թռչուն քստմնելի՛ բու մը,

Դիշերներու վայրագ ու վա՛ռ տխրահաւ մը:

Երէկ՝

Իր մասին գիտցաւ միայն լե՛ռն ի վեր քարացած

Կտորը սե՛ւ ամպին,

Այլ չանցա՛ւ Լոռութիւնը գետածիի ծոյլ վազքով,

Այլ եռանդուն հին ցոկեղ՝

Ինքնիր պարկին մէջ տակի,

Գրաւ ջուրի եզերքին, ցկնած ձագերն իր Զայնին,

Եւ շտապեց ձորն ի վար:

Լոռութեան հին ցոկեղէն, որ շտապեց քիչ առաջ.

Ան մուրաց ծագ զո՛ւտ երգի:

Լոռութենէ՛ մը տարբեր՝

Նուագի թե՛ւ մը ուղեց:

Հանած ձգնէն մարդկութեան

Կախման կէտի... Ան լոռութի՛ւն մը ուղեց:

V

Ան մուրացկան մըն է: Ունի երազող բիր:

Ունի ախանջներ՝

Որ ծայները լսելէ առաջ, կը մանեն զանոնք.

կը շինեն նուագ.

Կը հիւսեն բեհեզ երաժշտութեան.

Բառարան լակող ան չունի լեզու.

Այլ շերտ մը միսի, աղո՛ւտը կնանտոց.

Որ կը դպի յար,

Սրտերու վինին

Եւ ջերմ աղօթքի մանտօլիններուն:

Հոտառութիւնն իր չեղաւ երբեք կադ,
Այլ արագաշարժ բերաւ անվերջ բոյժ,
Դիզեց, կուտակեց, առջեւը քիթին:

Դսկ սիրտը թոնիր, իսկ սէրը անթրոց,
Հոն Աստուած կ'նստէ
Հացե՛րն իր կամքին:

Ան մուրացկան մըն է:

Չուզեր մարգերէն, չուզեր ոչ ոքէ

Չի՛ կենար սեմին հարուստ դռներուն.

Հին տոպրակէ մը կրնայ հանել իր ամբողջ կեանքը,
Եւ որպէս փտած կորեկ՝

Դետել թշուառութեան բոլոր անօթի վառեակներուն,
Ագահութեան սեւ ու կծծի ծագմայրին.

Կրնայ օրերուն պղպեղոտ ապուրին մէջ՝

Որ իր եւ վշտահար մարդոց կեանքն է՝

Բրդել որպէս չոր հաց.

Բորբոսած անցեալ մը, թթուած ներկայի
մը հետ՝

Դիմացը գոռոզ ապագային,

Որ շո՛ւն մըն է՝ Անհո՛ւնին պահնորդ:

Մուրացկան մըն է:

Արցունք եւ կրա՛կ լակեցին իր աչքերէն սէրն ու վիշտը:

Ամեն ինչ կը նկատէ լակի պնակ.

Ամէն ոք լակող շուն:

Մուրացկան մը:

Որուն կտցահարունցաւ հաւատքը դեռ,

Պրագլիլիական վամփիոի նմանութեամբ
տարակոյաներէ,
Որուն «Հայր Մեր»ին մէջ խաղաց մերթ Չարին
օծալեզուն,

Բողական բովանդակ պղծութիւնը,
Ստութիւնը համօրէն ու համազրաւ,
Բայց որ մաքրեց ի վերջոյ, ներքին ամեն թղթանոց,
Բայց որ անցուց իր հոգին հազար նրբին ծաղերէ,
Մանրամաղի՛ց ինքզինք միշտ:

Մուրացկան մը:

Ետին մո՛ւթ ու ինք դիմացն Աստծո՛յ,

— Գութիղ մատով դպէ ինձ, իմ զրկանքի՛ս դպէ դուն:

— Կամքիդ լոյսին ես գծով, պիտի քալեմ յաւիտեան,

— Քո՛ւ թոնիրէդ ինձ ջերմութիւն, ինձի հաց, ինձի
տարրե՛ր տեսակ հաց

— Ու ամենուն բաղձանքէն ամենուն կեա՛նք մակարդէ

— Ու ամենուն երազէն ամենուն բա՛ղդ ձեւէ տուր:

— Գթահայեաց աչքերով ծաղրանկարիս նայէ Տէր,

— Պիտի ըլլայ ան դաշնաբաղդ ու մաքուր,

Որբագծուած վե՛րջնապէս:

— Բայլ մը Չարի՛ս մօտեցիր — պիտի ընդմի՛շտ
հեռանայ,

— Շունչ մը եւ մեղքը մարդոց՝ պիտի շնչէ խո՛ր
ներում:

Մն մուրացկան մըն է:

Ետին մարդիկ կան (մութ) ու ինք դիմացն է
Աստուծոյ (Լոյս)

Մն Կը զարնէ մարդոց,

Ծնրադրելէ առաջ Աստծոյ:

Տիեզերքն ու ինք տրուած են իրարու

Եւ երկուքն ալ ոչի՛նչ ունեցողի պէս են.

Կը նային իրարու, կը ծեծեն իրար՝

Էն պզտիկ տրուածն ու է՛ն մեծ տրուածը
Ու պզտիկն ահա մերժուած մեծէն, վնասուած մեծէն՝

Կուգայ Աստծոյ:

— Տուիր մեզ իրար, տուր ևւ հաշտութիւն,

— Տուր առա՛ւտ բարիք, Մեծ Խաղաղութիւն:

— Ամեն մարդու տուր, ինչ որ դո՛ւն կ'ուզես

— Ամեն մարդ ըրէ, ի՛նչ որ դո՛ւն կ'ուզես.

Իսկ ես բանաստեղծ, իսկ ես մուրացկան,

Խոր, անեզրական,

Մի՛շտ սէր կը մուրամ

Ու նրջանկութիւն,

Կամքիդ դրան քով,

Բզքտուած սրտով

Իրցունքով, յոյսով...:

ՊԱԼ ՄԸ ԱՐԵԷ, ՍՊԱՍԷ՛

Դեռ մի՛ ծագիր,

Դեռ իմ հոգիս Յոնուարի նման է՝

Յուրտ ու ցմախ օրերու

Մթնամառախուղ վառ եղանակին.

Դեռ երկինքին վրայէն գիշե՛ր կը հոսի.

Ան կը հոսի դէպի ճայռերու վրայ,

Ան կը հոսի դէպի պաղանծաւներու տամուկ

նախասեմին,

Ան ստո՛ւեր առ ստուե՛ր կը փրթի. շո՛ւք առ շո՛ւք

կ'իյնաջ.

Դեռ մի՛ ծագիր,

Լայն տաշտերու մէջ, խոր տաշտերու մէջ,

Գիշերը կ'եռայ վիուկի ձեռքով,

Նման թանձրասեւ, անփայլ խայծղանի:

Գի՛ւղ է հոս.

Ամպերն հի՛մա դեռ անցան.

Դեռ աստղերն իրենց հէքեաթը կ'ըսեն,

Ոսկեպաղպաջ ու լայն, իրենց հէքեա՛թը կ'ըսեն:

Կը մտմտան, կը ժպտին:

Աստղերն ու դուն ու մեր պզտիկ գիւղը իլիկներ

էք պառաւի,

Որ կը մանէք լոյս, որ կը մանէք առեղծուած ու
խաւար,

Մշուշ ու դերձաններ՝ խելօ՛ք զրոյցի.

Որ կը մանէք սէր ու կեանք, մահ եւ ունայնութիւն,
Վէպը Աշխարհի մեծ ճամբուն:

Դեռ իմ սիրտըս ուրիշ իլիկ՝

Տակաւին նոր մանեց երեսուն զարուններուն
Իր կանանչ դերձանը.

Բայց չարաթել որքա՛ն մանեց

Դառն բանի տրտմութիւն:

Դի՛ւղ է հոս.

Հոս քիչ կը քնանան, հոս բոլորը շա՛տ կ'երազեն:

Հոս աչքերն կը փակեն եւ այդպէ՛ս կը գինովնան,

Հոս շրթները կը կղպեն, կուտան բանալին տանաէ՛ր
Հոռութեան,

Ծամբորդ ծայներուն կուտան ձեռքը մօմ,

Զոր վառած կ'ըլլան հոգիի՛ն բոցէն:

Դեռ մի ծագիր, գի՛ւղ է հոս:

Հոս սիրածներն են հեռու, տարբեր յարկի շուքի աակ,

Սէրն է բայց մօտ ու մէկտեղ.

Երկու սրտով նոյն բուխերիկն ու նոյն ծխա՛նն

ուենցող:

Հոս քաղաք չէ.

Ուր սիրածներն են մօտիկ,

Բայց առած է մեկնումի՛

Սէրը շատոնց ուղեւորմա,

Հասած ուրիշ կայարան:

Դեռ մի՛ ծագիր...,

Դեռ նոճիներն այն՝ հեռաւոր լնին քով՝

Զընրուեցան իրենց տրտում աղօթքէն,

Դեռ ծաղիկները լուռ են՝

Խամրած մութին եւ աշնան կրկնակ ցայգի՝
մը ներքեւ:

Գի՛ւղ է այստեղ.

Կրնայ հոս, ծառն ըլլալ մարդ, երազողի շինական՝

Համբել աստղերը բոլոր, ունենալ հոգ ու
կնճիւռ

Դեռ մի՛ ծագիր,

Դեռ մեր վտակը գիւղուկ, լիժակարդեց ամեն քնքոյշ
մեղեդի,

Զորոգայթեց սիրտըս իրմէ՝ դեռ գաղտնիք,

Դեռ ան կ'երթայ ովկիանոսին զինք ունկանող
սլաւամութեան,

Ալիքներուն կապոյտ ու մեծ կոխին,

Միտելով յար վիթխարի՝

Մովամբուոքին ապագայ:

Դեռ մի՛ ծագիր...:

Հոս միշտ գիւղ է, լեռնային զո՛ւլ, զուլա՛լ գիւղ,

Աշունն այստեղ ազգական է ամենուս,

Հողմերն այստեղ կ'ըլլան դրկից ամեն տան,

Զմեռն այստեղ սուրհանդակ է ամրան աղուո՛ր
բաներուն:

Հոս վերմակին տակ փափուկ, կրնայ աղջիկ մ'երագել,
երագին մէջ խօսիլ այսպէս, ո՛վ արեւ.

— Ի՛նչ լաւ պահ էր քիչ առաջ.

Սնկիւն մը կ'սաստուեր, տղայ մը լեռնական,

Իրիկուն. լուսիւն —.

Ա՛հ, մի՛ ծագիր, լա՛ւ արեւ, դնու չաւարտած

երագն ա՛յդ,

Դեռ երագին մէջ այդ վառ,

Աղջիկն համբոյր չտուած,

Ա՛հ, մի՛ ծագիր լաւ արեւ,

Զի ան կրնայ ամչնալ, գիւղին ամբողջ կարմիրով...:

047E

1545



A II
29410

Պ Զ Տ Ե Կ Խ Օ Ս Զ

Մուժ է. կ'անձրեւէ. ծառեր կան ու շշուկ.
Չղջիկնե՛ր կը թռին.

Յայգահաւե՛ր դեռ ուրիշ...

Հինցած, խարխուլ որմի պէս՝
Կը փլի Մուժն ինքնիր խաւար գոգն ի վար,
Կը ծալուի իսկ յետոյ, ամեն նրբին լեռնաստուեր,
Դէպի անտա՛կն անդունդին:

* * *

Իմ տնակիս մէջ, անտառի եզրին՝

Ոչի՛նչ ունիմ ես.

Սեղան մը պզտիկ, աթոռ մը որբուկ,

Անկողնակ մը հէք

Ռւ երկու նկար...:

Անձրեւ մուժին մէջ, ինչ աղուո՛ր անձրեւ,

Ի՛նչիս հետ հատնող որչափ հա՛շտ անձրեւ:

Կը կենամ, կը դիտեմ, կը յիշեմ.

Լեռնաշնալին պահն այս տրտում ցայգածաղիկ
մ'ըլլար կարծես:

Կը հոտուրտամ դո՛ւրս ու ներսի

Բովանդակ մո՛լթը հիմա:

Ֆա կը դպիմ, հին ապրումի թակաղակ՝
 Զարթնակոչնա՛կ հոգիիս :
Ժաքնագրոյց քնքոյշ բանե՛ր կը խօսին:

* * *

— Բաղաքի մը մէջ, մեծ ու հեռաւոր,
Թաղուած լոյսի մէջ ելեքտրական,
Բաղաքի մը մէջ ուսանողական,
Ապարանքի մը թուխ աղջիկն էիր դուն,
Սո՛ւգըս էիր դուն,
Սիրոյ թոնիրիս հա՛ցըն էիր դուն,
Որ նշար քաղցըր, որ եղար լեղի՝
... Իմ սե՛ւ հեռաւոր:

* * *

— Ձմեռ գիշերուան այս հողմոտ պահուն,
Իմ Առանձնութեան մութ լեռնացայգէս,
 Դեռ կը յիշեմ քեզ
 Ու դեռ կ'ափսոսամ
Ֆաւի տակ մեռած
Ամեն բարի պահ, ամեն տրտո՛ւմ ժամ:
Ժէեւ շատ հեռուն՝
Մեծ քաղաքը կայ, լոյսեր կը վառին,
Ապարանքը կայ,
 Լոյսե՛ր կը մարին,

Դիշերը կ'անցնի, գիշերապահի ճօկանին տակէն,
Լուսնակ մը դեղին կ'իյնայ պատշգամ,
Եւ դուն դեռ արթուն,
Կը նուազես յար մահերգը տրտում,
Հիւանդ Շօքէնին.
Թէեւ այս հեռուէն, պէտք էի ըլլալ
Եւ քիչ մը ուրախ,
Այլ ես դա՛ննօրէն ահա կ'աւիտոսամ
Ամեն բարի պահ, ամեն տրտում ժամ,
... Իմ սե՛ւ հեռաւոր:

* * *

— Մութ է, կ'անծրեւէ,
Անծրեւ կայ այստեղ եւ խորունկ անտառ.
Իմ տնակէս ներս,
Որ աղմուկի մէջ լտլթի՛ւնըս է ալ ասկէ յետոյ,
Ոչ մէկ զիրք սիրոյ,
Ոչ վէպ, քերթուած
Ու երաժշտութեան ո՛չ մէկ ծայնատետր...:
Սն մահերգ մըն է համր ու մենաւոր,
Հեռու դաշնակէ
Եւ աղջիկներու սէրէն շա՛տ հեռու՝
... Իմ սե՛ւ հեռաւոր.. :

* * *

— Ունիս դուն գրքեր ու գրադարան

== ձամբանե՛ր հարուստ.

Ու եթէ ալ կուռք մեր հզօր դարու՝

Դուն երկրպագու՝

Հազա՛ր ունիս ճղճիմ մանչ

== Բեզի ազնիւք, քեզի կանչ.

Բառե՛ր աղուոր հիասքանչ

... Իմ սե՛ւ, իմ սե՛ւ հեռաւոր:

* * *

— Դրադարանըս իմ, աշխա՛րհն է հիմա,

Սա լն՛որ վայրի,

Սա անտառը մուլթ.

Ցերե՛կն ստուերոտ, գիշե՛րն անյատակ:

Ու ծայնագրութեան տետրակըս իմին

Սա դիմացի ծաղկանիշ.

Կանաչ մարգե՛րն են բոլոր:

Իմ տնակիս մէջ կայ լոկ

Երկու նկար,

Որոնց քով՝

Ես կը մնամ իբրեւ երրո՛րդը անոնց.

Մին սէրն է քու, երբե՛ք. երբե՛ք չծնած,

Մին իմ սէրըս խա՛չն ի վեր

Ու ես այսօր, ասկէ վերջ՝,

Մեռելաթա՛ղն երկուքին՝

... Սուրբ ու միւռո՞ն հեռաւոր...:

ԽՕՍՔ՝ ԱՍՈՐ ՀԱՄԱՐ

Շանր էր սէրըս առաջի,

Իսկ ասոր քով կը մնայ՝

Տրտում, աղքատ, մէկ կրամ...:

Մեծ էր սէրըս առաջի,

Բայց տեսնելու համար զանգուածը Ասոր

Կը վառեմ սէրըս նախկին՝ կտոր թուղթի՝ մը նման:

Շա՛տ էր սէրըս, անսպա՛ռ՝ երբ դե՛ռ ես նո՛ր սիրեցի.

Կաթիլի պէս արցունքի Ան ցամքեցաւ այնքա՛ն շուտ,

Երկրորդին վա՛ռ արեւէն...:

Խո՛ր էր սէրըս, անյատակ, չերկրողուելո՛ւ սահմանուած.

Իսկ Անով Դուն, ո՛վ Աստուած,

Ուզեցիր որ թրջուի, միայն ներբա՛նն Երկրորդին...:



Քաղղը ատեց զինք: Ինք սիրեց Տղան՝

Տասնըվեց տարի,

Ու պիտի սիրէ՝

Հողի՛ն տարիքով.

Սն պիտի սիրէ՝

Որչափ քարը կայ իր քարայնութեան լուռ

գաղափարին մէջ,

Որչափ ջուրը կայ իր վիճակներուն

այլաճերպութեան մէջ

Ու բղխող ալին,

Ջորերէ անցնող իր անուշ վաղքին,

Մարգերէ քալող աղուոր նազանքին

Ու մէջը դեռ վեհընթաց, հանդիսաւոր գետերուն:

Սն պիտի սիրէ՝

Որչափ ատեն ուր Հովը կը քալէ անապատներէ,

Շքե՛ղ լեռներէ՝ միշտ գերազազաթ.

Ռվասիաներէ՝

Սէրը տուաւ լոյս, իսկ քաղղը շարեց

Իր ոտքին առջեւ խաւար արահետ ու մահուան

ճամբայ

Բաղդը բարձրացուց անձին շուրջ կնոջ՝
 Դեռ հաւատարիմ իր միակ սիրոյն,
 Սնհաս կսկիծի ամրապատ որմով
 Ձինական պարիսպ.
 Ան զինք հարկադրեց մութ վախճաններու,
 Սեւ նպատակի՛.
 Կախեց իր գլխուն չուան անէծքի,
 Լուռ կախուողներու ողբաշա՛րժ պարան.
 Սատկած բո՛ւ դրաւ իր ոտնահետքին,
 Պատցուց դաճաղ՝
 Իր տեսողութեան մթնշաղներէն.
 Զարկաւ մահազանգ՝
 Զոր կնոջմէն զատ չլսեց ոչ ոք՝
 Ա՛հ, ի՛ր իսկ տունէն:
 Ինք սիրեց՝ սակայն,
 Կծկեց սիրտը միշտ,
 Ու երբ քնացաւ՝
 Դուռը բա՛ց ձգեց
 Իր խեղճ երազին՝ խեղճ Տղուն համար ...:

* * *

Բաղդը ատեց զինք, ինք սիրեց Տղան,
 Հնուաւոր էակ ու լուսե՛ղ Տղան,
 Որ տարիներ վերջ, որ սակայն տրտում,
 Դողդոջ Մոռացման Աշունի կէսին

Պըլլայ Անցեալէն իր տերեւաթափ,

Զմեռուան սեմին կեցած որպէս ծառ,

Որպէս տրտո՛ւմ ծառ, որպէս որբո՛ւկ ծառ:

Բաղդը յամբօրէն,

Բաղդը հե՛ւ ի հեւ ատեց եւ Տղան,

Լծեց զայն վիշտին,

Կախեց իր վիզէն ծանր քար Յաւի,

Ու կինը զգաց, հեռուէ՛ն գիտցաւ,

Ատելութի՛ւնն այդ

Ընդդէմ հեռաւոր, իր լուսե՛ղ Տղուն:

Կինն ունեցաւ սէր, կինն ունեցաւ սուգ,

Ունեցաւ արցունք.

Կինն ունեցաւ արդ՝

Երկու տառապանք, երկու մե՛ծ անէծք.

Բաղդը զինք ատեց, սիրա՛ծը ատեց:

Եղաւ Տղուն ալ տունը դամբարան,

Գեանքը՝ Մահավէտ,

Սիրտը մարած փուռ՝

Յար կարելի չէ ոչ մէկ հա՛ց ելիել

Նոյնիսկ աղբատի՛:

Այս բոլորին հետ, Տղան կը մոռնար,

Ժնք միշտ սիրող կին՝ ա՛լ կը մոռցուէր:

* * *

Կեանքը ծերացաւ, կեանքը շա՛տ քալեց, զնաց
շա՛տ հեռու-

Կնոջ երազին դուռը բա՛ց մնաց.

Զմտա՛ւ անկէ, այն հին, լա՛ւ Տղան.

Ու ալ ահա պառաւ է Ան՝

Աղուռը աղջիկն առաջուայ:

... Սէրը բայց միշտ զօրացաւ,

Եղաւ անդի՛ն իր կեանքէն

Շողացող ջի՛նջ աղամանդ.

Իր մէջ դրաւ երկնքի, իր մէջ դրաւ սրբութեան

Հօր պահե՛ստ մը գաղտնի:

Զայն օրէ օր զողնալով, զայն մա՛ս առ մաս տանելով,

Ամուսինէն, ծնողքէն, զաւակներէ՛ն իսկ անգին,

Թոռնիկներէ՛ն իսկ մատղաշ,

Շրջապատէ՛ն բովանդակ,

Տարաւ, տուաւ Աստծոյ,

Որպէս երկրի, ցե՛խ երկրի

Մէջէն բերած արմաղան՝

Անսպառ քա՛ղցրը նուէր:

Զտարա՛ւ սէրն՝ Աստծոյ,

Հոյսէն աղտո՞ր արեւուն,

Չտարաւ սէրն աստղերէն

Բուռ մը Անոր ջինջ նշոյլ,

Ոչ ալ բուրմունք ծաղիկի,

Այլ կնոջմէն այդ սիրող, հաւատարիմ կնոջմէն,

Տարաւ մասնիկ մը սրտի,

Ամեն վայրկեան, բոպէ,

Որպէս նուէր գերարժէք:

ԳԱԳԱԹՆԱԿԷՏ
ԲԱՂԶԱՆՔԻ ՄԸ
ՎԱՂԱՆՑՈՒԿ

Քովըդ ըլլալ, նայիլ Քեզ,
Քովըդ ըլլալ, լսե՛լ Քեզ,
Քովըդ ըլլալ եւ խօսիլ
Քովըդ ըլլալ ու լռել...:

Գալ լոյսէն առաջ, գալ մութէ՛ն առաջ,
Աստղերէն կանուխ,
Հովը դեռ չեկած՝
Մտնել հոգիիդ կիսաբաց դռնէն...:

Բոլորն երբ մեկնին,
Երբոր քունը գայ ու դարձեա՛լ մեկնի,
Դեռ Քեզ հե՛տ մնալ, սիրտ սրտի՛ մնալ:
Քո՛ւ երջանկութեան իտէալը մնալ:
Քու անունէդ աւելի Քեզի մօ՛տ ըլլալ,
Սրտէդ աւելի Քեզի պէ՛տք ըլլալ,
Դու վրադ ցանուող ափ մը հող ըլլալ,
Խաւարցունք ըլլալ, լուծիւն ըլլալ,
Քեզի Աստծոյ տանող զի՛րկն ըլլալ:

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ ՈՒ ՎԵՐՋ

Դարունն եկաւ ամեն տեղ, պերճահանդէս եւ քնքոյշ.
Դարունն եկաւ կենսայորդ աղջկայ պէս զեղադէմ,
Դարունն եկաւ նազանքոտ պուրակներու կածանէն...:

* * *

Մազիկ առ ծաղիկ մտաւ երկրէն ներս, զարդարեց
սեղան,
Ըրաւ կնքալոյծ ծածուկ տեղ պահուած ամեն զոց
սրուակ

Բաղցր բուրմունքի.

Պտտցուց արեւ, պտտցուց հաշիշ, խունկ ու
կնդրուկներ,

Յանեց օդին մէջ զմրուխտէ փոշի,

Ամեն իրիկուն ան ծաղկէ՝ ծուխի

Սա ձորերն ի վար

Նհտեց վառ բուրվառ,

Իջաւ սարերէն, լեռնազահերէն, ջինջ պարեխներէն,

Դաշտի՛ն մէջ իջաւ, հասաւ զետեզերք,

Դպաւ բիւրեղի,

Դպաւ կայծկլտող հազար լոյսերու,

Ցօղ ու նաճանչի:

Յերեկնադայլայլ ճնճըղուկներուն
 Մանրեց իբրեւ կեր,
 Շողշողուն արծաթ,
 Վտակներու քով ու նրան ծառի:
 Նուազարդխման
 Ան ծորակ բացաւ
 Գիւղին չորս ծագէն:
 Ան ջրվէժ շինեց
 Երկինքը ամբողջ, — նոր Նիակարայ՝ —,
 Թափող ծոցն ի վար
 Բնութեան փոսին:
 Մեծ Երջանկութեան իր լուցկին քսեց ծառին ու
 թուփին,
 Ճախսարեկի տուն
 Փշոտ մացառին.
 Դաւար պտուկի կանաչ պատրոյգին
 Մօտեցուց բոցին իր իսկ թոնիրին,
 Զորակներուն մէջ եւ անձաններու մթին սեմերուն
 Կախեց լուսամտի:
 Դեց շթաքար, լզեց պտկաքար:
 Գիւղական ճամբու երկու եզերքին,
 Դարունն է դրեր հազար մանուփին,
 Հազար ծնծղայ.
 Օ՛, միջատներու ուրախ հարսնի՛ք կայ.
 — Քալենք, ամեն կողմ նուա՛գ կը տեղայ:

... Ան՝ պսպղուն ու թոյլ ու եղկազնաց ջուրերու մէջ
 Լուաց իր թաշկինակը կոյսի.

Իր թաշկինակը լուսին մըն էր Մայիս ամսու,
 Ամպի ծուէն մըն էր կապոյտի վրայ.

Իր թաշկինակը ծովամաս մըն էր՝

Ուր ինկած են եօթը լեռնազազաթներ,
 Եօթ աստուածներէ մերժուած,

Բայց եօթն անգամ աւելի երջանիկ՝
 Հոն հեղուկ կիսամութին մէջ, քան վերը բացարձակ
 լոյսին:

... Ան՝ ծառերուն հասակին՝

Կապեց ստուեր մը հեռաւոր ու հին երգի,
 Իր երգը ջութակէ մը կը փրթէր, եկքանիկէ մը,
 Տերեւ ու զեփիւռի մտերիմ զրոյցի մը
 Անխոստովանելի անրջապահէն:

Գինով տղայ մը կ'երգէր իր երգը՝ բացակայ
 աղջկայ մը համար,

Դեռ երազի մը չեղծուած հետքերու վրայէն:
 Արեւելքը կը ժպտէր.

Եւ ութսուն առաւօտի պայծառութեամբ կ'արթննար
 ամեն գիշերէ վերջ,

Իւրաքանչիւր ծաղիկ՝

Եւ սրտիս մէջ իւրաքանչիւր սիրոյ պահ:
 — Բալենք, ամեն կողմ Լոյս է, հեղեղ արեւու...:



Ան՝ այս տարուան մեծղի գարունը, յղի՛ գարունը,
Նուաղումէ կազմուած Լոութեան մը մէջ՝

Թաղեց նկարն իմ անհուն վշտիս:

Այդ նկարը կուգար, այդ նկարը կ'ինքնամղուէր
Տիեզերքին միւս ափերէն,

Տարբեր կեդրոններէ,

Ոգեբնակ անջրպետներու ծոցէն:

Այդ նկարին երազուն գունագծերը

Բերուած, եկած էին տարիներով,

Հոգիիս անիմանալի կարողութիւններէն,

Օրէնքովը յաւիտենական սէրերուն:

Ճամբաներովը բացարձակ Տառապանքին:

Քառուղիներու հեռանկարին՝

Դարունը տուաւ կանանչ արդուզարդ,

— Քալե՛նք, յոյս է ամեն կողմ, կայ հսկա՛յ իտէալ:



Անհաւատարիմ ու գեղեցիկ եղանակ մըն է գարունը,
Քանի որ հոս է, քանի որ այնտեղ,

Քանի որ կ'երթա՛յ...:

Նրբ փոթորիկ մը կոխէ Մարտ ամսու ելեքտրական
կոնակին,

Ապրիլի լուսամփոփին մէջ լոյսեր կը խուժեն
յանկարծ

Եւ Մայիսը կը ճառագայթէ

Ամառուան նախագաւիթին մէջ:

Գարունն է երկչոտ նման եղնիկի.

Կը հալածեն զինք երեք հին որսորդ,

Էն ծերը Ձմեռ, էն կտրիճն Աշուն,

— Բալե՛նք եւ յետոյ՝ ափ մը հող զարնան
աղուո՛ր դագաղին...:

ԽՕՍՔ ՔԱՆԱՍՏԵՂԾԻ

I

Առանց երազի իմ թոնիրս չի՛ վառիր,

Կը փչէ շուրջը քամի,

Յուրա ծմեռուայ կ'ըլլայ կէս,

Կը պողան դուրսը դեւեր,

Կը նստի բովը իր վհուկ,

Կը պառկի մէջը կատու:

Կը մնամ ես տժգոյն մարդ,

Դալկահատակ ծախորդ անձ,

Նուազ կեղծող սրիկայ

Թիթեղագործ բռներու,

Եւ արուեստի չարաշահ:

* * *

Առանց երազի իմ թոնիրս չի՛ վառիր,

Որպէս պողպատն շատախօս ջատու՝

Վէշը քաշած վեր, աշխարհի՛ դիմաց,

Աշունն անամօթ,

Կը բամբասէ յար,

Դարուն անպարկեշտ,
 Ամա՛ռը տխմար.
 Զմե՛ռը դանդաղ, որ կը յապաղի, որ խօ՛սք է տուած,
 Որ ինչո՛ւ չի գար: Կաղ ու ամենի՛ Լենկթիմո՛ւր է ան:
 Դր բամբասանքով, իր չարսրտութեամբ,
 Իր խուլ վրէժի կոր բնազդներով,
 Մն բլուրներուն, ան ծմակներուն, ան լեռան լանջին,
 Կուտայ դաժան տեսք, տգեղ երեւոյթ,
 Մտրա՛կ կը զարնէ ծառերուն վրան
 Եւ իր հովերուն կոնծած ձեռքով
 Կ'իջեցնէ ուրազ՝
 Կղմինտրին վրայ սա տանիքներուն
 Ու պատուհանի աղքատի՛կ փեղկին:
 Կ'ընէ ան լեղի համը գիշերուան,
 Կ'ընէ ան կծու երկի՛նքը ամբողջ,
 Կ'աւլէ գետինէն հետքը ծաղիկին
 Եւ օդին մէջէն՝
 Հե՛տքը թռչունին:
 Առանց երագի Աշունը կ'ըլլայ,
 Դեղին պատուհաս,
 Վայրագ Ատիլլա:

II

Առանց երգի իմ շրթունքս կը սեւնայ՝
 Ծխնելոյցն մը ներսի կողմին պէս,
 Դողի պէս տապակի.

Եւ իմ լեզուս՝

Հին ու ժանգոտ բանալիի մը պէս

Ձի կրնար բանալ

Արտի ոչ մէկ դուռ,

Երկնքէն տրուած ոչ մէկ լաւ գաղտնիք:

Ան կը հանէ ծայն մաղուող աւազի,

Ձուրին մէջ թափուող

Սառած մոխիրի:

Ու սիրտս կ'ըլլայ իր գործէն դարձող

Անշահ, անվաստակ՝

Դարտակ մըջիւնի պէս ամօթահար,

Որ եթէ մտնէ

Մըջնածակին մէջ,

Կ'ըսպաննուի իսկոյն՝

Ի՛ր իսկ վաղեմի հարազատներէն:

* * *

Առանց երգի իմ շրթունքս կը սեւնայ՝

Ձայներն այնտեղ կ'ըլլան մուր,

Լոռութիւնը կ'ըլլայ օծ:

Ես չեմ կրնար պտըտիլ, կը խարանէ զիս ճամբան,

Ագռաւներ իսկ կը խնդան,

Տուած ամեն բարեւիս,

Ամեն անգամ, երբ խօսիմ, ամեն անգամ երբոր լամ,

Ամեն անգամ երբ լոեմ...:

Բուն լուծիւնը չի գար ննջապահերս ամոքել,
Այլ անբարբառ ցուրտ Մղձաւա՛նջը կուգայ
Կը շարժի նախ իբրեւ մթին վարագոյր,
Կը տարածէ ողջ էութիւնս
Զառանցանքի մը վրայ:

III

Առանց սիրոյ ես կոյր եմ.
Աշխարհն է հեռու եւ իր ճամբան սեւ.
Աչքդ կը տեսնէ, չի՛ տեսներ հոգիդ,
Դե գի Միակը չկայ.
Բազում բաները որ կան ու կը տեսնենք
մենք աչքով
Կազմիչ տարրերը կ'ըլլան
Հոգիին բո՛ւն խաւարին:
Ծառը մասնիկ մ'է մութի, ջուրը մասնիկ մը մութի,
Մարդերն ու Լոյսն արեւին
Մասնիկ են դեռ միշտ մութի՝
Երբոր մեծ սէրը չկայ,
Երբոր սիրուա՛ծը չկայ:
Եւ ամեն ինչ լոյս է միշտ,
Լայն ու անվե՛րջ փողփողում
Երբոր սէրն է եկած ներս
Եւ անոր հետ ծնրադրած
Եւ աղօթա՛ծ էք մէկտեղ:



Առանց սիրոյ կոյր եմ ես ու նաեւ խուլ մինչեւ վերջ,
եւ իմ կեանքս աւարտած կ'ըլլայ

Ու մահը չսկսիր:

Յաւերթութիւնը չի՛ քալեր դէպի իմ հոգիս,

Կը մոռնայ հասցէս:

Կ'ըլլայ աշխարհը տակաւ,

Գունաթափ թուղթ ու տետրակ,

Կեանքը կոտրած ծուռ զրիչ,

Ճակատագիրը մեկան.

Ինչպէ՛ս սակայն ասոնցմով,

Ինչպէ՛ս սակայն կո՛յր ու խուլ՝

Մահուան դէմ տող մը գրել,

• Գերեզմանիս դէմ մէկ գիր,

Աստուածակերպիչ անհուն Բաներուն

Խորունկ աղօթքին

Ինչպէ՛ս մատենանը գրել՝

Առանց երազի, առանց մեծ երգի,

Յաւիտեան Սիրոյ:

ԽԱՌՆ ԽՕՍՔԵՐ ԼՈԳԻԿ

Յիմ հոգիա՝ անձանօ՛թ Ափրիկէ,

Շուրջը կապոյտ ջուր,

Ինք շաղուած լոյսով,

Կրակ ու բոց գետիններով անսահման,

Առիւծներուն կատաղի,

Ունի մոռնչն իրեն ծայն,

Եւ ունի՝

Դանդաղ փիղի լոռթիւն:

Գետածի՛ է թանձրամորթ՝

Նայուածքի դէմ թշնամի.

Թշուառութեան ան լինէն,

Ճերմակ կարապ,

Կը նաւէ՝

Դաշնակշռոյթ սահանքով:

Ան զիտէ բաներ՝

Տաք հեղուկներու գաղտնիքին մասին,

Որոնք կ'ողողեն

Հզօր Ափրիկէն:

Լուսէ՛ պատեանէն գլուխը հանող

Որպէս հին կրիայ Արեւի՛ մասին,

Քւ իր ծովային ահեղ արկածին՝

Ան կրնայ պատմել
Սա լեռնէն իջնող՝
Բիրտ ու ամեհի ձիւնամորիկին:

* * *

Իմ հոգիս՝ մշշապատ, սառցային
Ու հերմա՛կ Ալաքա՛
Զգացումիս ոսկեհանքերն այնտե՛ղ կան:
Հոն կը մօտենայ խածան զամբոյի պէս
Բեւեռը երկրին.
Կը մագնիսուին, կուգան ինձ,
Անվերջ շարքեր խոռվքի.
Կը մագնիսուին հոգիիս
Սառնատարած հիւսիսին՝
Նախանձ, կասկած ու կիրքեր
Ատելութիւն, սէր ու վիշտ.
Կը մագնիսուի դեւի խօսք,
Հրեշտակի լոռութիւն:
... Խղունջի պէս իմ հոգիս,
Կը բարձրանայ յամբօրէն՝
Դեղեցկութեան ու լոյսին՝
Էվէրեսթները մինչեւ:
Կ'առնէ կանգ. կը նայի.
Ներշնչումս իմ եօթներանգ
Նիակարա՛յ մ'է այսօր,

Ու հաւատքս տաք ջուրներու ցայտադրիւր:

Երջանկութի՛ւնն սպիտակ,

Սիպերիական արջի պէս,

Դանդաղօրէն, ծանրօրէն,

Կը յամենայ դեռ ետիս,

Ու սրավազ ջայլամներու պէս խոշոր,

Դժբաղդ օրերը կուգան,

Կը պաշարեն գորշ Սահարան ներկայիս.

Մրրիկներու դիմաց լուռ, Աստծոյ դէմ ծնրադիր՝

Կը տառապի իմ հոգիս, կը պաղատի լոյս եւ գութ:



Պիտի չխօսիմ, պիտի չմտածեմ ոչ մէկ բանի վրայ,
բայց անհուն սէրը պիտի բարձրանայ հողիս մէջ:

ԱՐԹԻՐ-ՈՒՆՄՊՈ

Ըսէ՛ ինծի, որ դուն փոխուա՛ծ ես ալ.

Դացած հեռու,

Դացած Արեւմուտք ու զացած հիւսիս,

Տեսած շատ մարդիկ՝ շէկ ու սպիտակ,

Շատ երկրի մանչեր.

Տեսած ծիւնադաշտ,

Խաղացած սրի,

Նկարուած մէջքը ցրտին անտառի,

Ապա երազած, ապա ծանծրացած,

Ապա մութին մէջ Շօրէ՛ն նուազած:

* * *

Ըսէ՛ ինծի, որ դուն կարօտցար.

Կարօտցար Արեւելքին, Հարաւին,

Սփական հեռաւոր լեռներուն,

Պզտիկ քաղաքին.

Եւ կարօտցար այն պզտիկ թուականին
Դարոցին ու աղբա՛տ այն տղուն,
Մթին երազներու խոնարհ բնակիչին:
Ըսէ՛, որ դուն փոխուա՛ծ ես հիմա.

Ալ կ'ուզես վերադառնալ.

Ըլլալ պարզ, բարի, գեղեցիկ:
Տարբեր լեզուի մէջ,
Ըսէ՛ որ կարօտցար մեր լեզուին,
Մեր հին, աղուոր, մեծասքա՛նչ լեզուին:

* * *

Ըսէ՛, որ դուն երա՛զը կը սիրես նորէն,
Աշունը, մշուշը, մայրիններուն այն հեռաւոր
անտառը.

Ըսէ՛, որ կը զղջա՛ս Լոռիեանդ համար,
Ըսէ՛, որ դուն չար չէիր,
Որ կը սիրէիր հէքեաթը, բանաստեղծութիւնը,
Լուսինն ու ջուրներուն աղմուկը:

Ըսէ՛, որ անգամ մը միայն դուն չար եղար,
Եւ այն ատեն չարութիւնը քեզ գեղեցկացուց,
Ըրաւ քեզ ցանկալի,
Պաղատելի եւ գուցէ երկրպագելի:

* * *

Ըսէ՛, որ դուն ալիտի վերադառնաս օր մը,

Ըսէ՛ որ դուն չար չես, որսլէսզի չուզես

վերադառնալ բնաւ.

Ըսէ՛, դուն որ այնքա՛ն կը սիրէիր գետը, քարտինները,

Լեռն ու ծովուն ալիքը.

Դուն որ ժամանակին գոյները տեսար,

Որ քալեցիր գունափոխուող կեանքին հետ,

Որ մեկնեցար ամառնավերջի տրտում օր մը,

Որ մնացիր տարիներով հեռու,

Արիւնի, ծուխի եւ գէշ աղմուկներու

աղէտին մէջ.

Ըսէ՛, որ մաքուր ու գեղեցիկ՝

Դուն ալիտի զա՛ս, ալիտի զա՛ս այլեւս...:

ՅԻՇԱՏԱԿԸ ԶԱՅՆԻՈՂ

*Le Dieu que je connais ou ne connais pas,
qu'il s'apaise !*

*La Déesse que je connais ou ne connais pas,
qu'elle s'apaise !*

PSAUME BABYLONIEN

I

Երբ Աշունն ու տխրութիւնը խօսին լիճերու ափին,

Դեղիննայ շերտը օդին,

Ըլլայ մոմիա,

Հեռանայ տասնըմէկ բլուրներու անջրպետով

Կանաչ կարաւանը գիւղական մեծաշուք ամառուան՝

Երբ Լոութիւնը բանաստեղծի մը պէս անցնի

Բարտիններու սա տոգոյն, հեզ ու դալկածաւալ

անտառակներուն մէջէն՝

Երաժիշտ տղայ մը մեռնի յանկարծ

Իրիկնային դաշտերուն խաղաղութեան գիրկը,

Մեռնի՛, մեռնի՛

Ես՝ աղջիկս, ես՝ սիրեցեալս, ես՝ յաւիտենակա՛ն

պաշտելիս,

Պիտի յիշեմ, նորէն ելեւէջը քու տխրական ձայնիդ

Եւ արտասուեամ՝

ժամանակներու ցեխին, ցուրտին ու մառախուղին մէջ:

Սանձարծակ հողմերու մռայլի՛ն մէջ:

Էս-գիշերներո՛ւ մէջ՝ որոնք նման են խաւար
մահաւիտսի,

Սյգաբացներու՝

Որոնք պահը կը մնան կախուող մարդոց:

II

Տասնմէկ բլուրներէ շատ անդին,

Հոգիներուն տառներկուերորդ ծորակին մէջ,

Բաբելական գորշաթեւ, այլ վա՛ռ մտածումի մը շուրջ,

Սատուածները համրանք չունին ու կը բզզան

Ճանճի պէս, մոծակի պէս ու մժեղի...:

Մընչի՛

Հալածելով մարդիկը, հոգեղէն էակ,

Դէպի կեանք, տառապանք ու սէ՛ր...:

Ձայնդ, քու ձա՛յնդ կը յիշեմ,

Ջուրերուն պատարագին օրը՝

Որ տեղի պիտի ունենայ հարաւային ճամբաներու
շքեղութեան մէջ,

Սկանաւիերթ ծաղիկներու եղանակին՝

Որ Գարունն է, կեանքն է, Լո՛յսն է,

Երբ կեռնեխները կ'եռանդնոտին

Ու մննդազգի եզնարօտիկը տանիքներուն

վրայ

Դ՛ընէ՛ կապոյտ գծագրութիւն,
 Երբ աստղերը միջատներու պէս կը քալեն,
 Երբ հողն ի վար ջերմութեան հսկայ ծարաւը
 Զննարարութիւն
 Ոգիներուն հաւաքոյթը տեսքը ունենայ
 արժանթիւնեան, փամփաներուն,
 Երբ մեծ նկարիչի մը վրձինը իշնայ զիւղական
 նամբու եզրին,
 Երբ ան մոռնայ երանգապնակը ծիածանի մը
 գօտիին մէջ,
 Ես՝ աղջիկս՝, ես սիրեցեալս, ես՝ յաւիտենակա՛ն
 պաշտելիս,
 Պիտի գտնեմ ձայնիդ գաղտնի հետքը,
 Անցեալին ձիւնոտ արահետներուն վրայ,
 Եզուրջներուն վնիտ սառնափայլութեան մէջ,
 Եւ արտասուեմ՝
 Երջանկութեան ցօղի՝ նմանող արցունքի կայլակներով:
 Ու մեր հանդիպումը պիտի ըլլայ
 Հանդիպումէն իրար անվերջ
 Գնահատագրուածներուն:
 ... Ես ու վերադա՛րձը յանկարծ քու Զայնիդ...:

III

Պուն՝ իմ կեանքս, դուն՝ իմ յաւերժադարձի
սկզբնազուարիթ
Ակնթարթս, տարիս ժամանակս,

Դու՛ն՝ երկրորդուած, երրորդուած, անհունորդուած,
Եւ աստուածնորդուա՛ծ հոգիս,

Երբ կարօտս՝

Անծանօթ եւ շքեղ ձիաւորի մը պէս անցնի

Դու տունիդ առջեւէն,

Երբ քահանայ մը իր աղօթագիրքը փոխ տայ

Կապոյտ գիշերներու սիրահար,

Բօքայինամուլ դողահար մէկու մը,

Ու ինք տենդազառանց բաներ պատմէ

Աստղերուն շուրջ թափառող ստուերներու՝

Աղջիկս, աղջիկս, յաւէրժասէր,

Յաւէրժապայծա՛ռ իմ աղջիկս,

Ես, անըմբռնելի հեռաւոր տղայ,

Կը քակեմ Զայնիդ զաղտնիքը

Հարսանեկան ոսկեհանգոյց ծրարի՛ մը պէս....:

Դու՛ն այն աստղն ես, որ բոլոր աստղերը չե՛ն,

Եւ աստղաբաշխ մարդոց զիտութիւնը

Անգօր է քեզ գտնելու,

Ու բանաստեղծները չեն արտօնուած

Երկինքներուն վախճանը պրպտել,

Ոչ ալ մարախլածիր սկիզբը՝

Անեզրէն փրթած սա փշրա՛նք երկրին.

Եւ երբ քու տեսքդ յիշեն՝

Հրաշէկ ու պայծառ Ասիոյ հէքեաթները կը խամրին
իսկոյն

Սքսաւիելի տրտմութիւններու եւ անդո՛ւնք
[Թախիծի մէջ:

Դուն այս նկարն ես յաւէտ:

— Ոգեզծուած պատկեր —,

Որ վրձինի մը տակ իյնալու

Չսահմանուեցաւ ռամիկ բախտին:

Որեւէ կարողութեամբ քեզ սահմանել

Սպաննե՛լ է քեզ իսկոյն.

Թող քեզ Աստուած սահմանէ, գիտնայ յաւիտեան,

Չյայտնէ ինծի, չըսէ ոչ ոքի:

Իսկ ես տկար

Ունիմ քեզմէ քանի մը խեղճ, տարտամ նկար,

Նենգազծուած օր մը սրտէս բանաստեղծի:

... Դուն ջուրի նրբարծաթ երիզ մըն ես յանախ

Կարօտիս մանիշակագոյն դաշտանկարէն անցնող,

Եւ քու խորհուրդդ կ'ըզզլսէ, կը տանի,

կը յարուցանէ:

Ձիս մարմնէս:

Դուն կ'անցնիս, լուծիւնը կը տիրէ,

Կը փռուի ան Իրանի զորքերուն պէս.

Դուն կ'անցնիս, ցորենազգի խոտերը կ'օրօրուին,

Հրանունկներ կը դողան,

Կը թրթռան ալիքները ալերին բոլոր խաւերուն.

Դուն կ'անցնիս, պատարագ կ'ըլլայ, տօ՛ն օր կ'ըլլայ,

Ճամբաները կը մտնեն աստղերուն սրահին մէջ,

Սանդուխներէ հրեշտակները կ'իջնեն,

Առաքեալներ կ'աղուորնան,
 Կը բուրէ Հողը. Զուրերը կը խայտան,
 Կեանքը կը ներդաշնակուի Մահուան քով.
 Կը խօսիս դուն,
 Ու ծաղիկներուն վրայ գոյները իրենց կնիքը
 կը դաշնեն
 Հազար երանգ մեղաններով,
 Լուսնկան զարմանալիօրէն կ'ամչնայ,
 Բախտին անիւր առաջ կը նռնէ,
 Երկինքները կը դասաւորուին անըմբռնելի
 կշռոյթներէ ներս,
 Աստուածները պահ մը կը մտածեն,
 Կը բանան թեւ,
 Կ'իջնեն վրան սարերուն գպզածին,
 Դժբախտ մարդոց կը փչեն տան ծխնելոյզէն
 Կամքի ու գթութեան շունչ,
 Կը կոխեն յետոյ ոտք անոնց դոնասեմին.
 Եւ հոգիս. այն ատեն, ով իմ վերջնակա՛ն ալջիկս,
 Կը վերադառնայ իր քաղցր հուններուն:
 Կը վերադառնայ հեռաւոր ծայնիդ
 Անասելի կախարդանքին:
 ... Դուն իմ սրտիս թաղարին մէջ կաս,
 Իմ հոգիիս սրբատուփին մէջ կաս,
 Ծունչիս բուրվառին մէջ.
 Գեղեցկութեան, սիրոյ եւ ներշնչումի
 Հրեղէն բաժակներուն մէջ.

Եւ երբ՝

Հաւատքս թաղեմ եւ հողակոյտէն Յիսուս

մ'ամբառնայ,

Երբ կամքս դուրս նետեմ երկաթէ սկուտեղի մը

հանգոյն,

Երբ Չանձրոյթն ու Տխրութիւնը հալին

Կարագ իւղի նման,

Եւ ցանկութեանս ելեքտրականութենէն

Բզբտուին դէզերը ամեն տեսակ խաւարի՝

Տիրէ լո՛յս, լո՛յս, լո՛յս.

Ես՝

Զիս ու ապագաս նուանող աղջիկս, քոյրս,

աստուածուհիս,

Ես՝

Անցեալիս կայսրութեան տիրուհին,

Զիս ճակատագրական համբաներու, մեծութեան եւ

Անմահ կեանքի սլաքով

Քաղցրութեան միակ բացարձակացում,

Կը յիշեմ՝

Առաւօտը քու Չայնիդ

Ու կը դառնամ ետ՝ իմ անհուն միջօրէիս....:

Ս Պ Ա Ս Ո Դ Մ

Սրտիկս ի յազկոյ նման, գիրկիւ լար է աղբջուճէ
Ն. ՔՈՒՉԱԿ

I

Առտու: Պիտի գայ. բայց երբ...

— Երբոր լոյսերն ըլլան մեղմ, երբոր լոյսերն ըլլան
զով:

Ու տերեւները պայծառ...,

Ու վտակները վեհառ...,

Ու ճամբաները կապոյտ...,

Շոյէ սղոխն ամեն բոյս:

II

Կէսօր: Չեկա՛ւ դեռ:

Կշուէր աստուած մը հոգիս, գծուէր սիրտս դժոխքի

Քսանեմէ՛կ վրձինով:

Կրնայ ան գալ, չեկա՛ւ դեռ:

Եօթը քաօսի ես մութը ունիմ, եօթը աստծո՛ւ

ձարաւը սաստիկ,

Եօթը հրաման գիտ չե՛ն լուսնիներ...:

III

Կէտօր՝ Արեւն է կանգնած ու ե՛ս եմ կանգնած,
 Մինչ բաղդս կ'ուռտէ պատժաց պնակէն
 Ազոռանք զեւի ու խաշած ծանծրոյթ.
 Լուսանկարէի՛ն զինք սա տնակին քով,
 Հրեշտակի մը հետ ու փարդենիի սպիտակ թուփին,
 Ու եռանկարն այդ՝
 Տային աջ ձեռքին իմ մե՛ծ հէքեաթիս.
 Ա՛հ, խմբադրուած եռանկա՛րըն այդ:
 — Պիտի Ան զայ, պիտի զայ՝ հազած աղուո՛ր
 պարեգօտ,
 — Պիտի Ան զայ երա՛զօրէն գեղեցիկ,
 — Պիտի տանիս Զայն դանդաղ, հիւրասենեակն
 հոգիիդ:

IV

Իրիկուն է: Կը օպասեմ:
 Պնաց արեւը հեռուն, գնաց արեւն իր մուտքին,
 Բաղդս խմեց երկինքին հազարագոյն շարքաթէն,
 — Արդէն պիտի զայ: Արդէն լուսինը ելաւ: Արդէն
 աստղե՛ր կը ծլին,
 — Ան՝ արցունքիդ ջուրին մէջ,
 — Ան՝ թարթիչիդ շուքին տակ
 Պիտի լուայ սիրտն ամբողջ
 Ու մտնէ նեղս հոգիէդ՝
 Իրիկնաստուե՛ր մը ինչպէս...:

- Սպասեցիր, քնացար:
- Դաւանան չես, դուն լոյս ես,
- Դուն դագաղ ես, երկի՛նք ես,
- Նոյն մարմնին մէջ, նոյն կեանքին մէջ, նոյն ջիղին՝
 Աղամ ես դուն, վատ Յուդա՝
 Նաեւ Յիսուս մ'ամբողջ սէր:
- Սպասեցիր քնացար.
- Դու հոգիլիդ դրան առջեւ, Սպասումդ միշտ արթուն,
 Եղաւ նման հաւատարիմ ծեր շունի:
- Երբ Ան եկաւ՝
 Ուշանալով եղած էր, շատ աւելի գեղեցիկ,
 Բայց չգիտցա՛ր դուն երբեք.
 Չհանդիպեցաւ նոյնիսկ Ան
 Դու Մեծ Երազիդ նոյնիսկ մասնիկին՝
 Ննջա՛ծ էիր զի ընդմիշտ:
 Եւ Ան մնաց սնարիդ քով Սպասումիդ շանը հետ՝
 Սուգի տխուր ու գեղեցիկ
 Ծաղկեպսա՛կ մը ինչպէս...:

Պը սպասեմ՝ որ աստղերը թրջեն Բեզ,
 Զեփիւոնները խաղան վրադ,
 Պիշերը խորանա՛յ չորս զիդ,
 Հաւախօսի առաջին պահն է.
 ... Դուն կը ննջես, դուն չես գիտեր.
 Երկնային Հարաւը իր ճրագներդ կը մարէ
 Ու Հիւսիսի անտառները տխուր են ու լռած
 Եւ կէս-գիշերը հիմա արծազա՛նգ մըն է միայն,
 Գետահովիտի լայն, խոր, նսեմական կէս-գիշերը:
 ... Աղուոր բաներ կը մեկնին.
 Եւ հոն՝ ուր զանգակ մը կայ, յղի է հրաժեշտի
 տխուր կոչնահարութեամբ
 Ու անսպառ ծթաստանին մատուոր կը սպասէ
 մեռաւոր սուրբերու մուտքին
 Եւ քսան հրեշտակներու պայծառ ամբարձման:
 Կայ ամեն կողմ թախիծ, կայ ամեն կողմ
 մեղամաղձութիւն,
 Կայ ամեն կողմ խորի՛ն ստուերաշարժութիւն:
 Հողը, մութին եւ բոլոր տրտմագորշ բաներուն մէջ
 ծրարուած
 Գետահովիտին ցանկատե՛նչ հողը՝

Սանդուխներ դրած, ելած վեր՝ երկի՛նքը կը կողոպտէ,
մը դուն կը ննջես, երազի կատարեալ քաղցրութիւն
մը դուն կը ննջե՛ս տակաւին.

Դուն ի՞նչ պիտի բերես վար երկնային մեծ
բարձունքներուն շքեղ աւարէն,
Ըսէ՛, առտու պիտի ըլլայ, դուն ի՞նչ պիտի բերես...:

* * *

Ես ցայգաշրջիկ տղայ մըն եմ
Եւ ցայգորդութեան ու արբեցումի նառագայթափաղի
անեգրաւահի մը
Փշրած եմ երազանքի ամեն: Նշխա քակուծ
մը թափառած ուղղութիւններովը սրտիս մեղմաւազ
սլաքահարութեանց:
Ամեն դի օրօր կայ, ամեն դի հեւք, ամեն դի
առանձնութիւն.
Իմ հոգիս գիշերամուխ է ու ես թափառագնաց
ոտքեր ունիմ.

Երկնքին ախտը վրաս է դեռ
Ու վարակուած, տարափոխուած է ծուծս
Դոյութեամբը յաւիտենական Անհունին:
Կը սպասեմ որ կողոպուտի գացող Հողը
Ծածուկ բան մը ըսէ ականջդ ի վար,
Ցանկ սրտիդ մէջ սրբասերմէն իմ մեծագոր
բաղձանքներու

Ու դուն դայն իմանաս իմացումովը միայն քու
անսպառ ենթագոյութեանդ:

Ես, տարտղնուած հոգի, սփռուած մե՛ծ
խաւարներու մէջ,

Վը սպասեմ՝

Որ երկնային շահատակութիւններէ զարձող Հողը,

Բերէ ինծի այն քասը, որ դուն կորսնցուցիր .

եօթ իրիկուն առաջ,

Զուարթանահանչ աստղերու արեւելեան ափունքին

Ու դուն չգիտնաս, այլ ներիմանաս զայն միայն,

ննջող, ննջո՛ղ հոգի.

Ի՞նչ գիտե՞ս, կրնայ քունը ըսել քեզի, թէ արեւը

ի՞նչ թափօրներով

Ի՞նչ վայելչընթաց անսութեամբ պիտի մտնէ

երկրի այս մասին մէջ

Ու հրապուրէ ամեն տերեւ, ամեն անձրու

քար ու ջուրի մասնիկ:

Պիտի լիանայ նոյնիսկ ամեն անկիւն, ամեն զաղտնի

խորշ

Ու միջատներու հոգին պիտի լայննայ ու

տարածուի՝ այն ասեմն:

Տե՛ս, ջուրերը արթուն են, ու գեղաոռա՛կ

առ գեղաոռակ

Ուր կ'երթան արծաթ հեղուկները հիմա,

ո՛ւր:

Յամաքամասերուն համար գետերը ամեն քան

պիտի ըսեն ովկիանոսներուն

Եւ ովկիանոսները պիտի մոռնան,
ամենի ովկիանոսներք

Պիտի մոռնան.

Եւ հոն տարրերային պայքարը ոտքի պիտի ցատկէ
Կայծակնազօր ու փառապանծ շքեղութեամբ ու
մշտօրէն կատաղի,

Որովհետեւ ովկիանոսներուն գաղտնիք մը
կը հաղորդուի ամեն ժամ,
Մանաւանդ ամեն ցայգապահի:

Դուն չե՞ս գիտեր, անթերի բարութիւն, որ ամեն
շարժում

Երթ մըն է դէպի կոիւ, դէպի ռազմի դաշտ.
Դուն չե՞ս գիտեր, որ ամեն տարրի, ամեն
տարրամասնի մէջ

Ունվախճան ռազմի լման յատակագիծ մը կայ
Ու կեա՛նքը՝

Այս մեծ, խորունկ վա՛զքը դէպի Մահ,
Գերեզման եւ անծանօթ արեւացումներ՝
Թափանցում մըն է ամենուն համար,
Դէպի ամենուն ռազմի խուլ, կոյր, մունջ
յատակագիծը:

Կեա՛նքը՝
Ջարհուրելի՜ հոսանք ու եղերակա՛ն վայրէջք,
Կեանքը՝

Ջարմանահրա՛շ նենգութիւն հողի ու
մանրամասնութեանց,

Յեանքը՝

Անեզրախաւ երկինքներու անշո՛ւկ
խորագիտութիւն՝

Յատակազծերու փոխադարձ զողութեան փորձ մը,
Ճգնա՛նք մըն է միշտ,

Ու Մահը՝

Պարտութիւն մը բոլորին վրայ,

Էւ Լոյսը՝

Յաղթանա՛կ մը ամենուն մէջ։

* * *

Դուն ննջած ես, ես կը սպասեմ։

Երկրորդ պահն է հաւախօսի։

Գիշերուան սեւ երիվարները կը վազեն դէպի

Արեւմուտք,

Խենթ, փրփրոտ, հեւասպառ արշաւներու մէջ։

Ո՞վ լացաւ սակայն այսքան մաքրութեամբ

խոտերուն ցօղունին

Վրայ, ննջա՛ծ աղջիկ։

Էթէ մահը չլլար, ո՞վ պիտի կրնար մաքրանա՛լ,

Մաքրանա՛լ այսքան։

Հիւանդութիւնները ծնառ են ու բաղնիք է Մահը։

Ելի՛ր. տե՛ս,

Քնչ ծածուկ, ինչ աղուո՞ր է ամեն բան, ինչ մաքուր։

Մահը ներդաշնակած է ամեն ինչ։

Ան ներդաշնակած է կեանքը. հերիք է:
 Ուրկէ՞ պիտի դիտէինք եւ ի՞նչ՝
 Եթէ չըլլար Մահը:
 Դոյացուց մեզ կեանքը տգեղ,
 Ու Տուաւ Աստուած Մահը իբրեւ արդուզարդի
 հնարաւորութիւն.
 Մահը ոչ թէ պատիժ է, այլ արդուզարդի արտօնագիր՝
 Տրուած մեզ Նախախնամութեան կողմէ:
 ... Դուն ննջած ես:
 Բունը շեշտած է բոլ մէջ ամեն գեղեցկութիւն,
 Եւ սրբագրած է քեզ. աղուորցուցած:
 Արեւը, ես ու մեծ Բանաստեղծութիւնը կեանքին՝
 Շարունակութիւնն ենք Երազիդ,
 Ու Սէ՛րը՝
 Շարունակութիւնն է ամենուս զոյութեան:



Դուն ծնած ես Կեանք, Սէր կամ Մահ՝
Իմ իւրաքանչիւր բաշխափոխիս ներընդմէջէն,
Պսոյտի մը պահուն՝
Զոր ես ըրի կանանց մարգագետիններու վրայ,
Երբ մտածումներս այնքան առատ էին ու խտացած,
Որ իմաստն ու ճշմարտութիւնը կը կաթէին
Անոնց ներազրիւրի խորախոր աչքերէն՝
Գետնի՛ն վրայ անդնդամեղ մոլորակին,
Փոշիին՝ զեղջական բլուրի առանձնակ
կածաններուն.
Ու դեռ պսակին վրայ՝
Գարնանային լուսանդորրով ողո՛ղ
ծաղիկներուն.
Նաեւ ու մահառանգ՝
Երագիս շրջահոսող ստուերներուն վրայ,
Եւ անոնց աղօթական ամբարձման ու խուսանքի՛ն
վրայ:
Լե՛ռ կը բարձրանայի, երկնային պայծառակոյտ
ողնոյցք մը տակէն.
Անջրպետները թրջուած էին անեզրալոյս,
անեզրանշո՛յլ յստակութեամբ,

Փողփողումովը բոցային բո՛րբ անհուններու՝
Երբ դուն ծնար մէջս կեանք, սէր, կամ մահ,
Հրամանուած էր զոյառութիւնը Տիեզերքին բոլոր
տարածութիւններուն

Եւ արդէն՝

Անհամար, անթիւ, մտածումի ու կամքի
չննթարկուող քանակութիւնը

Դարերուն,

Անցած էր ու պիտի անցնէ՝ր տակաւին ահաւոր
հոլոփոյթներու մէջէն,

Բաօսէ քաօս ու արփայնութենէ արփայնութիւն,
հրաշքէ, հրաշք

Ու ղէպի վերստին բացարձակ, նախաճառագա՛յլթ
աստուածութիւն՝

Երբ տարիքի մը մէջ, երբ մտածումի
կեդրոնացման մը մէջ,

Երբ հասակի աստիճանի մը վրայ,

Ինքնապաշարուած քեզմով, լուռ եւ անձնամփոփ,
կեանք, սէր, կամ մահ՝

Կը մագլցէի՝

Աւերակ վանքի մը փուլքերէն անցնելով,

Հեռագագաթ զառիւծերի մը խոնջօրէն ու դա՛ննօրէն
յանձնած ամեն բան:

Հնուուն ծո՛ւլ կար եւ հոս ամայութիւն.

Հոս լեղի՛, օդածարաւ, լուսամո՛լ վերելք մը.

Եւ հողիիս է՛ն կեդրոնին ու է՛ն մութին մէջ,

Կրակ մը իր բոցեղէն թաշկինակները կը շարժէր,

Նետելով մերթ ընդ մերթ սրտիս սեւ

սեղանին

Յիւր ատրային տաք բաղդաթուղթերէն:

Յիւսմէն քայլափոխի, ամենայեւորն, աննշմա՛ր

նուազաշարժութեանս

Իսկ թողէին.

Յիւր ծնէիր գուն, կը ձուանայիր, կ'ոգեշինուէիր

մէջս ու չորս դիս՝

Գետին ինկող փոշիին, սաղարթներուն վրայ ինքզինք

գծող

Բորէասի թո՛ւնդ հովին,

Ու հնութեան գացող մտածումի մամուսմու

կաթիլի մը հետ,

Կաթիլներո՛ւ հետ:

Փայտերուն գո՛րշն ի վար թափող լոյսին հետ,

Մեկամաղծութեանս շթացումին հետ,

Ճորելուն հետ տօսախի զով ստուերներուն,

Միջոցէն ներս քաղցրագծուող երազիս կոյս

մարմնին հետ,

Մաքուր եւ անարատ հոսումներուն զուգընթաց.

Եւ զուգընթաց գարնան՝ որ կուգար,

Հովին՝ որ զով ու ալեծեւ՝ կ'անցնէր,

Մաքրածուէն ամպերու յոյլ ծածանումին հետեւելով.

Իսկ ամպերուն հեղուկ մանրէներով կը վարակուէին

վերը

Լեռներուն ամայադէզ գազաթները, աւարտումները,

սլաքումները:

Մէրդ՝ կեա՛նք, սէրդ՝ մահ, սէրդ՝ աղջի՛կս
կը պաշարէր զիս,

Կը ներծլէր էութեանս խորը.

Ու կ'ըլլար շուրջս՝

Մշուշներու անհունագան գունաւորում:

Եւ վարը՝ անդունդներուն սարսուղդեցիկ ոգին՝

— Տիեզերակա՛ն Գեղեցկութիւն —,

Կը դնէր ցուցամատը ճակտիս խորշոմներն,

Ու ես կը քալէի ու դուն կը ծնէիր հանդարտ,

Բերուելով էութեանս մտերմագոյն

անկիւններէն.

Իսկ իմ հոգիս՝

Գոյութեանս պատնէշին միւս կողմը,

նուիրական հորիզոնագծէն անդին,

Կ'ընէր քեզի սիրոյ եւ հաւատարմութեան սրբազան
իր ուխտը, ողջ-կէզը...:

* * *

Ես նստած եմ ծովափին վրայ.

Ջուրերը կը տատանին, ալիքնե՛ր կը խաղան:

Երկինքը հեղեղուած է ծովափին

տարածութիւններու մէջ.

Ան՝ Երկինքը, Ան՝ Մեծ Բովանդակին ցուցանիշ

կապոյտ սկիզբը, յատակը,

Ան՝ դեռ ոսկեզուարթ աստղերուն եկեղեցին,

Դեռ փետրափափուկ ոգիներու լայն զքօսարանը,

Դեռ արնւի համբայ, դեռ մահուան տղի,
Դեռ Յիսուսի յաւիտենական կածան՝

Երկի՛նքը.

Խուժած է ծովուն մէջ, վերստեղծուած ու մեծվայելուչ,
Խոր ու հաճդարտական
ամբողջականութեամբ:

Ծո՛վը: Երկի՛նքը: Բացակայութի՛ւնը փոթորիկին,
Ծանր, ահե՛ղ չգոյութիւնը մեծ փոթորիկին՝
Որ կը սարսէ, շրջէ, կը վերիվայրէ ամեն ինչ:
Ծնունդէդ առաջ, ծնունդէդ վերջ, ահա դեռ ծնունդի՛դ
ընթացքին

Ով սէր, ով մե՛ծ, ով ահազնատարա՛ծ սէր,
Լս գացած, նոյնացած, ամբողջաւորուած եմ
փոթորիկներուն մեծամոռայ ռգիին:
Փոթորիկը կը բերէ զիս ու ես կը փոթորկիմ մէջս,
չորս դիս, ամեն բան:
Իմ արիւնիս սնունդն է ան, հիւթը գոյութեանս
կենսածուծին,

Ջիղերուս ու էամբիս մղականութեան բացարձակ
օրէնքը: Ուժը: Արագութիւնը:

Դարժել անշարժութիւնը, տեղափոխել, մղել,
հանել, շրջել, քանդել
Ու վերստեղծել ամեն բան, հոգի, կրեւոյթ,
ըմբռնում:

Մեկնիլ տակաւ աւելի բուռն սաստկութեամբ տեղէ
տեղ.

Աստղէ աստղ, անջրպետէ անջրպետ,
ծեւավիտիսել ու անցնիլ.

Ճեղքել մշուշը, խաւարը, ուկկիանոսը՝
փոթորի՛կը.

Իմ տարրս է ան. իմ հաշիշս ու վէրքս.

Եւ մարդ կը սիրէ իր հաշիշն ու վէրքը՝
Ամեն բանէ աւելի, զինք կազմող հողէ՛ն իսկ աւելի՝
Մըրկակրօն, խառնապաշտ ու մոլեռանդ երիտասարդն
եմ ես միշտ, ո՛վ իմ սէրս,

Ով իմ աստղային սէրս, աստղածաւա՛լ սէրս՝
Ծովաջուրի բոլոր աստիճաններուն վրայ՝
Գիտե՛մ, աղը իր դառնութիւնը կը բաշխէ այս
տարտամ յևտմիջօրէին՝

Եւ խարակները մէջն են,

Անօսրական ու սգաւոր գոլորշածուխերու:

... Պիտի ծնիս դուն, գաս, բերուիս, յա՛ղթօրէն
նակատագրուիս ինծի, սէ՛ր,

Լուսային պայծառընթաց արագութեամբ,

Մտածային թղիւուն, ժայթքուն,

Ահագնահրաշ ու գերացա՛յտ հասնումով,

Մինչեւ ներսս, խո՛րս, գոյակեղրոնիս վերջին ծուծին
ու կէտի՛ն մէջ,

Պիտի ասեղնածայրուիս, մխուիս ու մնաս հոն,
քիմիանաս՝ հոն,

Հասնիս երկնային, տինգերային

Ու աստուածային ծայրագագաթ

վերածումներու

Եւ կեանքի կատարելութեան Լոյսի՛ն, լոյսի՛ն,

լոյսի՛ն...:

Ծնունդդ... եւ փոթորիկը:

Ճիշտ ա՛յն ատեն է որ պիտի գայ, աղուորնա՛յ ու
փչէ հզօր փոթորիկը՝
Պապսուած բազում բանաստեղծներու ներքին տենդոտ
կլիմաներու, հրաթաւալումի եւ դժոխքի՝
մէջ:

Սպասուած եւ աղերսուած եւ աղօթուած նաեւ՝
Հոգեբիւրե՛ղ մաքրութեամբ,
Ու ցոլացումովը իր պնդօրէն աղամանդեայ
կամքին՝
Տղայէ մը՝ որ ես եմ, բանաստեղծէ մը որ ե՛ս եմ
նորէն,
Նուիրեալէ մը Անեզրին, որ ե՛ս եմ դարձեալ:

* * *

Ես նստած եմ ծովափին, մինչ փոթորիկը պիտի գայ
սաստիօրէն,
Հորովադարձ մոլեղնութեան իր բոլոր որջանձաւներէն.
Մինչ դուն՝ Կեանք, Սէր, կամ Մահ
Պիտի ծնիտ, ծագիս, լուսնաս տակաւ:
Նայէ՛, բնութիւնը կը թափանցէ զիս.
Լեարդս կծու է եւ յոգնած, կողովոցներ
ունիմ ալ,
Պը վարակուիմ անհուն, անդարձ ծովայնութեան մը,
մանրէներով,

Կը տիրուիմ փոխն ի փոխ քաղցր. ու կծծաթունդ
 յայտնութեանց պատկերներէ.
 Շողագծումներէ, ոգեծայնական
 ծածկախարշափ աղմուկներէ.
 Մեծ, ընդհանուր, տիեզերակա՛լ բանէ մը,
 Քանի որ դուն պիտի ծնիս,
 Դուն՝ որ լոյսը կազմելուն, Ջայն Արարչագործութեան
 ու Քասին
 Դոյութեան իսկ պայմանադրելուն
 Դադտնիքը, կարողութիւնը, կամքն ու նաեւ զո՛ւթը
 ունիս:
 Դուն կեանքէն առա՛ջ սէր ու մահէն վերջ նորէ՛ն սէր.
 Որ պատրանաստուեր ծնորքն ես միայն
 Աւետարանուած երկնաւորին՝
 Մանրանկարը, հիւլէածաւալ մէկ պատկերը, անոր
 առաջին,
 Միջին ու վերջին իմացութեան.
 Դուն՝ որ սակայն ունայնութիւնը չես, նանիր
 խաբկանքը չես,
 Սո՛ւտը չես քնաւ՝, ըսէ՛, ըսէ՛.
 ... Անսպասելի է կապոյտը հիմա. կապո՛յտո՛
 փոռուած բոլոր
 Արարածներուն վրայ, — ո՛վ իմ սէ՛րս:
 Ես քեզ կրած եմ արիւնիս կաթմիր փոշնհատիկներուն
 մէջ.
 Եւ դուն եղած ես անոնց մակատազրական
 ծգողութիւնը,

Կարմիր տննդէն ու բոցաւառ նռանդը,
Նաեւ հեռանկարը՝ որ վարդագեղ է ու վերջ չունի,
Որ հառագայթակոյտ մըն է, յաւերժագիծ ու յստակ:
Քարթիչներու անգիտակից, թոյլ ու տխրանալաղ
Մեղամաղձութեամբ զեղուն քացխփումին
մէջ՝

Անոնց նուիրական իրարհանդիպման ծանրախորհուրդ
րոպէին՝
Ծնաւ անշուշտ փափկագոյութիւնը շարժումներու
հէնքին:

Դուն ծնած ես, ապրած, շնչա՛ծ՝

Մտածումներու հեռաւոր ու շքեղ.

Ամենաշքեղ կայատաններուն խորը,

Մարգարտակցուած յանկարծ անուրջներու ողկոյզին:
Եղած ես իւղը, կրակը, սլա՛քը,

Այն բոլո՛ր բառերու, զորս անջրպետներէ՛ առդին

Աստղերո՛ւն սահմանեցի ես,

Պատանութեանս վարար ու բորբ շրջանին,

Սմառ եղանակներու համագրաւ, խոր ու գմայլագեղ

Բանաստեղծութեան մը զիրկը:

Իւղը, կրակը, սլա՛քը՝

Քանի որ պատանի,

Երկիրը յատակ մըն էր լոկ ջրհորի,

Ծածկուած՝

Կեանքին ու իրականութեան տղմուտ ջուրով.

Քանի որ մաքրութեամբ աղօթածխուա՛ծ էակ՝

Ոգիները դրին զիս լուսեղէն դոյլի մէջ,

Եւ հզօր կամքը բարձրագահ Անեգրին,

Տարաւ զիս ցնորական ամբարձումի:

Ի՛ւղը, կրա՛կը, սլա՛քը՝

Որովհետեւ դեռ սղայ, դեռ խարտեա՛շ պարման՝

Ես վաթսուն անգամ, բի՛ւր վաթսուն անգամ,

Յուսահատած եմ, հասած ծայրայեղ.

ձայրագա՛նց ինքնալքումի՞

Մոլորած ու կասած, հոգեծակուած ու արիւնած,

Լալո՛ւմ, լալո՛ւմ, լալո՛ւմ փարած յետոյ, ոգեալլուած՝,

Երագիս անիրական. խենթ ու բորբո՛ք

մարմնին:

Մազնիսացած է ցայգանձնութիւնս այն ատեն,

Դէպի Մեծ Զայներուն անխուսափելի. ծուռ,

շեղակո՛ղմ Հիւսիսը,

Ուղղութեամբը տասնեմէկ բուռներուն խորհրդափակ

իմաստին

Աստուածութեանց եւ արիւնի անհոմանիշ

խաչեալին:

... Սէ՛ր, դեռ ա՛յն տարիքէն՝

Ես թշնամի մորթիս, զոր նկատեցի անծիս

վրայ

Զայն պրկող բռնաշապիկ.

Որ եղաւ հետս շնչող հակառակորդ:

Ես ոսոխ՝ երակներուս, արիւնիս, ոսկորներուս

Ո՛ւ ծուծիս ու պայմաններուս,

Վասնզի բոլոր ատոնք պարսպած էին Անհո՛ւնն ի վեր
Նետուելու իմ ամենասուկալի
մոլեռանդութիւնս.

Վասնզի դեռ կը զգայի՝
Որ լեզուս խցան եղաւ խօսքիս,
Ու ձայնս չծագեցաւ իր բուն լոյսով,
Որ Լոռութիւնս խցան մը եղաւ ուրիշ
Իսկական Լոռութեանս վրայ.

Բիքս խցան զուտ բիրիս՝
Եւ անձս ամբողջ խցան՝ ճշտագո՛յն անծիս:
Ելլե՛լ, ազատուի՛լ, արծակուիլ մարմնիս ու մտքիս
Առեղծուած մութէն, առեղծուած շիշէն:
Վառօղն էի մոմուած ես. փամփուշտին մէջ հոգիիս,
Ու թերեւս էիր. Մա՛հ, դաժան բլթակը անոր,
Զիս երազիս սահմանուած նշանակին զարնելու.
... Սէ՛ր, դեռ ա՛յն տարիքէն, դեռ ա՛յն աշնան մէկ
ամսուն՝

Տրամադրուեցայ ես խորհրդաւոր կանչերու
Կանանչ ու նաեւ գո՛րշ ձայնարկութեան:
Անդամաքրուեցայ Մածուկ ու Մեծ Բանին, —
Բանաստեղծութեան —,
Յաճախելով անհատնում երկնաւորներու շքեղ
հաւաքատեղին:
Տիեզերքին մէկ մասը ծրարուած էր ու, կնքուած
Կնիքովը Անորոշ Ուժին.

Տեւորութիւնը իր դեղնագոյն լապտերները ալիտի
վառէր

Այն Աշնան,

եւ կեանքին անվախճանեալ վրապուղիէն կը ժայթքէր
մութիւն

Ու խաւարի միջիօն յորձանք.

Մահուան սեւ կառախումբը,

Իր գերեզման-վակօններուն անսպառ շարքը
Պիտի քալեցնէր ամեն օր եղերական այդ վրապուղիին
մէջէն

Ու զիտակ ամեն յոռի եղելութեան՝

Բոլոր ժամացոյցները ալիտի մսէին իրենց բեւեռային
ցուբտին մէջ,

Ու սլաքները ալիտի սարսուռային

Մահուան եւ Աշունին միսը մատնահարելէն:
Ես գացի, ես հեռացայ, Տիեզերքին
տարածութիւններուն մէջէն

Դէպի բացարձակ, ալքօլ ազդուած Լոռութիւնը,
այնքան լո՛ւռ,

Այնքան լո՛ւռ՝, ուր ըլլալը, ուր պատկերն իսկ չի

Հանդուրժուիր՝

Քանի որ երեւեալը իսկ ազմուկ մ'ըլլա՛լ
կը թուի,

Ձայն մը, խանգարում մը հոն, ո՛ւր մնաց ալ
մտածելը:

Բայց ես գացի, լուռ, անաղմուկ ոգերթութեամբ մը.
Բայց ես պաղատեցի, աղօթեցի՝

Որ կեանքը փրկուի, մեղքերը լուծուին,

Բարեխօսութեամբը աշդ մշտօրէն լուռ, զգայութենէն
իսկ աւելի անծայն,

Անծալտուն տիեզերամասին,

Որ Աստծոյ հետքը, անոր հո՛ղ եւս գոյութեան
փաստանիշը

Բլլալէն զատ, ոչ մէկ բա՛ն է ուրիշ.

Ոչ նիւթ, ոչ աննիւթականութիւն.

Ոչ ալ այօ երկուքով արտադրուած որեւէ ինչ:

Ոչ ալ անոնց որեւէ աստիճանի մէկ միջինը:

Գերիմացուած ոգետեղ ու պահ մը, սկիզբ ու ծայր
նման տեղ ու պահերու՝

Որ կ'իմացուին՝

Երբ տեւական, անընդհա՛տ թելն փաթիլի մէջ ըլլաս,

Բլլայ մարդու հոգիդ.

Սնհունին հետ, անոր ոգիներուն մէկ անե՛զր

համագումարին,

Այսինքն՝ Աստծոյ աներեւոյթ մէկ չնչամասնիկին հետ:

Գերիմացութեամբ, թաքնազգածութեամբ բացատրելի
տեղ մը՝

Ուր գամուած, բեւեռամխուա՛ծ աղօթքն եղայ,

Որպէսզի, Սէ՛ր,

Դուն հոն, հո՛ն յղացուիս, նախ հո՛ն կաթկթիս,

Նախ հո՛ն մնայ, ամբողջանայ մարմինը
Արարչութեան

Հրաշագեղ մէկ հարսին,
Ըլլայ այդ տիեզերամասը Մեծ Հարսնիքին մէկ վայրը
Ու Միւսը՝... Կա՛մքդ Տիեզերակալին:
Եւ Աստուած գուցէ խցանն է յաւիտեան ինքն իր:

* * *

Եղած ես դեռ, բոցապլաց, բոցահրա՛շ սէր,
Բեղմնափոշին, աւիշը, կենսահիւթը,
Իմ երիտասարդական բոլոր արցունքներուս,
անձնածորումներուս

Ու մերթ ալ՝
Բովանդա՛կ հոգեթափութեանս՝
Երբ ես տագնապած, աղէտուած, մորմոքած,
Կարծես ծայրէ ծա՛յր գեհնակոծութեամբ կը կսկծայի,
Աւերիչ գեղեցկութեամբ էգերու համար
Խենթ ու մեղսամոյ՛ն ու պղծաթաւալ:
... Դուն ծնած ես, ասրա՛ծ, շնչա՛ծ,
Իմ ըրած պատմութիւններուս մէջ.
Շուքդ ծածկած է զանոնք, նրբաստուերդ խառնուած
անոնց կեղեւին,
Բնակած ես անոնց կորիզին մէջ,
Ըլլալով հո՛ւնտը դուն անոնց բոլորին:
Երիտասարդ՝ ես կարդացի գրքեր.

Իմ ընթերցումս մեծ ջերմութիւն մըն էր՝
Որուն վրայ կ'եռային, կը պղպջային այդ
հատորները,

Չ'ալիշարժէր անոնց լուսնոտակութիւնը,
Սնկարելի էր որ չբարձրանար շոգի, չկազմուեր ամպ
այդ գրքերէն՝

Երբ ես կարդայի անոնցմէ մէկը:
Ես պիտի ունենայի անոնց՝ ալքօլը, եւ դուն, Սէ'ր,
Եւ դուք Կեանք ու Մահ,
Ալքօ'լն էիք իմ կարդացած գրքերուս, իմ
ջերմացուցած,

Իմ կարծես կատղեցուցա՛ծ գրքերուս.

Վասնզի ամեն գրքի մէջ կայ ուղեղի եւ արեան
շոգի մը,

Որ կը բարձրանայ միշտ դէպի առաստաղը
Ընթերցողներուն հոգիին:

Ու երբեմն ալ, Սէ'ր,
Գտած եմ քեզ ծաղիկներուն մէջ.

Սնոնց երկնային օրօրումին,
Սնոնց լուսաբաղձութեան, բուրմունքին ու մերթ ալ՝
Սգաւոր խամրումին մէջ:
Երիտասարդ՝

Ես մարմինս դրած եմ մուրճին տակ
Թշնամի նայուածքներու,

Ճօ'ւանի պէս իջնող խէ'թ ակնարկներու,
Սպաննող ու նննգաժէտ հոտառութեանց.

Բացած կուրծք՝

Դաշոյնին դէմ թունաւոր ու շեղ բառերու,

Վառութար ասացուածքի,

Պիղծ ու կեղծապաշտ վերագրութեանց.

Խենէշ, մոխրո՛տ արհամարհանքի

Ու լիրք ու յայրատ ու ցոփ կեցուածքներու.

Անցած քովէն՝

Գորշ, գոռոզ, վերապահութեան,

Անցած քովէն՝

Թունտրաներէ եկող այնքան սառուցիկ

անտարբերութեան

Այնքան բեւեռամերձ պաղ պա՛ղ սրիկայութեամբ

լպի՛րշ քմծիծաղի-

Փշրած ապա հոգիս՝

Աշխարհի անարգ սեւամորթութեան

Ու դո՛յլ դոյլ ու տակա՛ռ տակա՛ռ

Ու ծո՛վ ծո՛վ մախանքին համար.

Անհորիզոն ստութեան, անմթնոլորտ խաբէութեանց,

Անեթեր զրպարտութեան ու բամբասանքի

Սեւ նիւթերուն մուր ու ժանգո՛տ

տարածութեան վրայ:

Եղած եմ, ա՛հ. եղա՛ծ՝

Մեծերու վար, ստորին, ստորնաքարշ

կարգադրութեանց

Գուրին, վիրապին անդունդի՛ն մէջ, ու

չչնչած՝

Ապականութիւն, օծայնութիւն, շնամոլութիւն

Ու աղուիսամանկ նենգութիւն եւ դաւ:

Պէլ, Սէ՛ր, այլ գերապա՛նծ փէր,
Տեսած եմ քեզ, իմացած քեզ,
 Ըմբռնած, ներապրած, ջղապրա՛ծ քեզ,
Հաւատալով միշտ Ծնունդիդ, քու ծայրապարփե՛կ
 ծննդապահիդ:

 Գոյութեանդ, անպայման գալուդ:
Պիտի ձեռնալիր, զիտէի, թոյլ ու հանդարտական
 յայտնակերպութեամբ
Պիտի հագնէիր մարմին, ունենայիր ժպիտ,
Գծագրութեան մը մէջ ներկայացնէիր պիտի
Դուն անզծագիր Անբաւութիւնը,
 Քաղցրութեան, կրակին ու գեղեցկութեան:
Դեռ նոր, հազի՛ւ երիտասարդ՝
Ու դուն հրաշահանդէս երեւոյթ, կեանքի
 արփակենցա՛ղ դէպք,
Յայտնախմբեցիր զքեզ աղջկայ մը մէջ:

* * *

Կէս-թուխ ջերմութիւն մըն էր, կէս-թուխ բոցերու
 հրաշալի կեդրոն մը,
Ազուադաշն ու ալազեղ ու բորբ աղջիկ մը:
Տարի մը, հինգ ու աւելի՛ տարի, տաս ու աւելի՛
 տարի
Բնակեցար, Սէ՛ր,

Ներդաշնակութեան ու Լոյսի մէջ, աղօթքի,
ծնրադրութեան

Ու միւռոնի մէջ.

Յերեկներու մէջ՝

Որոնք կրա՛կ եղան վրաս,

Դիշերներու մէջ՝

Որոնք մահե՛րգ եղան չորս դիւ,

Ննջական երազի մէջ՝

Որոնք ծծումբ ու մոխի՛ր դիզեցին շուրջս.

Ապրեցուցիր ինծի շաբաթներ՝ արիւնի՛. գոյնով,

Դրի՛ր՝

Սեւ հովերու քաւակին,

Դրի՛ր՝

Սե՛ւ ուղղութիւններու մուտքին,

Դրի՛ր՝

Խաւար ու ցուրտ համբորդութեան մը
համար.

Պատրաստեցիր զիս դուն Յաւին, Տառապանքին,

Ծանր ու ահեղ Քաղցին:

Մեծամոռն է կատաղութեան ու աւերող ցասումին:

Չծնած դեռ լիո՛ւիլն, չցատկած՝

Փոսին մէջ կեանքին համայնական Աղէտքին՝

Հաւաքուեցար թուականի մը մէջ ու երկրային
անկիւնի մը մէջ,

Միսի մը ու շունչի մը ու սրտի մը մէջ,

Եւ, Սէ՛ր, ո՛վ հոգեմուր, ո՛վ բազմածարաւ,

Նւ ո՛վ առատաքա՛ղց Սէր,
Պենեցայ ես քու թերի, քու դեռ նախնի
ստուերայատնութիւնդ,
Ձոր սիրեցի, զոր պաշտեցի, զոր, այո՛,
գե՛րապաշտեցի ես օր մը...
Որով շնչեցի, որով բարախեցի, որով վերագոյացայ,
Ռբով սաստկառողջ եղայ, որով մահախտացեալ
դեգերեցայ.

Մն զիս տարաւ ամպային ապրումի,
Վամպային մթութեան, խտութեան, ամպային
ելեքտրածին բնագղին:

Սն զիս տարաւ բոլոր արտառո՛ց գիծերուն՝
Որոնց կարողութիւնն է մռայլ դիզել, շուք ստեղծել
Ու ցաւ ու վիշտ ու մորմոք յաւելուլ:

... Այդ աղջիկը.
Ժամանակին բոլոր գոյներով սիրելի
Եւ անոր բոլոր ածանցումներով նաեւ առեւի՛ աղջիկը,
Տուաւ օրերուս երեւոյթը կախալանի եղերական
չուաններուն,

Վասնզի՝
Խառնուեցաւ ուղեղս մէջը նախանձի աղտին,
Մէջը կարօտին մածնացեալ ցեխերուն,
Ներսը աղօթքի բծնառումոտ ու նեխ աղբակոյտին:
Ու դուն անկէ ու դուն անոր կէս-թուխ միսերուն
կրակէն

Իշխեցիր կամ քիս.

Նստելով հոգիիս նուազագոյն արտայայտութեանց
 վրայ,
 Փորելով զիս կնճիռ առ կնճիռ, մտածում
 առ մտածում,
 Բերիր վրաս դող, դուն բերիր ջերմութիւն,
 Բերիր մահուան դեղինները բոլոր:
 Վնասեցիր զիս հոգիէս, հանեցիր դուրս
 մտածումներէս,
 Դուրս՝ իւրաքանչիւր քջիջէ, իւրաքանչիւր
 մանրամասէ:
 Վերածեցիր զիս այդ աղջկան սպասող եռուն
 անհանդարտութեան մը,
 Իրեն դիմող բնազդական մշտաշարժ մղանքի մը,
 Ալ բոլորովին նիւթագերծուած համբոյրաճումի մը,
 Անգայտ կամեցողութեան:
 Ըրիր զիս իր շուրջ թափառող աղօթք, իր անծին
 բովանդակ խորշերը
 Շոյարար պրպտող ցանկութեան վէտիտեալ հեւք,
 Ու այսպէս հիւծում ու այսպէս օրէ օր
 դա՛ոն սպառում:
 Ըրի՛ր, ըրի՛ր դեռ Սէր, դեռ կէ՛ս պայծառակերպ Սէր՝
 Անոր ոտնահետքերը համբոյրովս, պաղատանքովս,
 հայցմունքովս
 Ու լոին շրթնաշարժութեամբս կնքող տրտում, էակ,
 Անոր ամեն մէկ շարժումին, թրթռումին,
 ակնթարթին համար

Արիւն ուխտող աներեւակայելի եղբայր մը՝
Իր ստուերէն, իր մարմնէն, իր հոգիին բուն
կեդրոնէն իսկ

Աւելի իր մօտ, ի՛ր հետ ապրող:
Դուն գիտ ինչո՞ւ տարիւր այդ աղջկան,
Այդ կէս-թուխ, այդ բոլորովին բո՛ց
Բոլորովին անդո՛ւնդ աղջկան:
Ինչո՞ւ երկուքիս մէջ զրիւր անվախճան
տնւողութեամբ

Քու անիմանալի, քու գաղտնի
Եւ իմ ամբողջութենէս զոյացած
Նախաբանը, եզերքը՝
Քեզմով ա՛լ անծայրացած ոգեհէքնաթիւ:

* * *

Ու, Սէ՛ր, դստն խցան սիրոյ մը ուրիշ, գերագոյն
սիրոյ,
Օրհնեալ աղջիկն այդ ըլլայ սրտիս ամեն ասմունքով:
Որդակնտեւ սիրելի՛

Եղաւ ան լոյս ամբասիր,
Որովհետ ատելի՛

Եղաւ ան սէր ու կսկիծ:
Եղաւ հում նիւթ, կենսատաղծ,
Անձս կազմող իմ ներքին
Ճակատազրին եւ սիրոյ
Հասարակա՛ծ Դօտիին:

Եւ օր մըն ալ տեսա՛յ քեզ.

Ակնաւորուած էր անձն իմ խաւարներուն դէմ անլոյծ.

Դուն սէրն էիր, կեանքն էիր,

Նաեւ դուն Մա՛հն էիր ալ....:

Անծրս ինկաւ անծիս մէջ՝

Ծածկեց ամեն դի մշուշ,

Անծրս անծիս մէջ գրեց

Բիւր Այբուբենն իր ծածուկ,

Որով շինուած բառերէն

Միայն Աստուած գիտցաւ բան.

Գիտցաւ իմաստն, առաւ համ:

Որով շինուած խօսքերէն, միայն քառորդը Մտքին

Պիտի մնայ մատչելի:

Անծրս անծէս ելաւ դուրս

Դոյլ մ'արցունքի պատկերով,

Որուն մէջ դեւ ու Աստուած նետած էին ափ առ ափ

Աղ ու շաքա՛ր նոյն ատեն:

Հայելիէ հայելի անդրադարձող հոգեստուեր՝

Տրտո՛ւմ էի եւ յոգնած,

Դէպքերուն մէջ պատահող

Կեցած քովիկն անոնց խորունկ մայրութեան:

Դուն կայիր ամեն տեղ ու ես չէի գիտեր ..

... Ու ես գիտէի, ... գիտէի

Ու ես կուգայի, կը բերուէի, կը մշտաձգուէի՝ քեզի:
Իմ բառերս կը պարունակէին քեզ,

Ինչպէս հնդ ազգան ընկոյզը կը պարունակէ իր կաթը.
Իմ հեւք՝ բուռ ներքին ծիլն էիր,

Խոտիքերուս ներքնադիր զսպանակը,

Կիրարկութեան չմտած նիրշնջամիտ հզօր

Ելեքարականութիւնը.

Բայց ես գիտէի ու չէի՝ գիտեր:

* * *

Ես քեզ եկած եմ լարդ, անյայտ, անլոյս տեղերէ,

Ես քեզ եկած եմ կննդահանգոյց դժուարութեամբ,

Զարհուրելի մղականութեամբ, անկասելի երթով:

Եկած քեզի արեւէ մը, երկնական արային գաւառներէ,

Ուր ամենազօր բաներ՝ կ'իրագործուին,

Ուր ցանկութիւնը գոյներ կ'զգենու, նուազ

կը յօրինու,

Եկած. քեզի՝

Նուիրածաւալ միջոցներու ծով խորունկներէն

Եւ անջրպետէ՛ն, անջրպետէ՛ն, անջրպետէ՛ն...

Եկած քեզի նուագային, հրեշտակային,

Լուսային ու ստուերային զաղտնաստաններէ.

Պոյութեանս կնիռապատկեր մակերեսին տակ,

Կար ուրեմն ենթանծնութեանս իսկ մէջ, ո՛վ իմ

զերազանց,

Աշխարհազա՛նց սիրեցեալ վերջին,

Կեանքիդ անբաւ հարստութիւնը, զանծը,

Ամբողջամասնեայ նոխութիւնը.

Արիւնիս տաք, կարմի՛ր ենթահողին ծոցն էիր ննջած

դուն,

Տխրախոռվ նայուածքիս ջուրերուն մէջ.

Եւ իմ թարթիչներուս ձգած ստուերը

Կը խորհրդախօսէր ու կը մտմտար քեզ:

... Ու դուն չէիր գիտեր, ու ես չէի գիտեր,

Աշխարհին մասնիկ-մարդիկը չէին գիտեր:

* * *

Կը ճանչնար զիս սակայն Կալատագիրը ամպին՝

Որ երկինքները կ'ընէ թաղմանատուն, սուգի սենեակ,

Անձնասպանութեան անկիւն:

Մտած էր մէջս եւ իւրացուած հոգիէս՝

Ճակատագիրը ընդմիշտ ահագնամոռյլ ովկիանոսին

Որ լե՛ռ առ լե՛ռ կը պոռթկայ.

Առատածայն ու կատաղագու մեծագոչութեամբ.

Որ կը ծնի, որ կ'ամենի, որ կը թաղէ,

Որ կ'ընդոստնու ու խելայեղօրէն

Կը յառնացայտէ կրկին.

Որ անդունդ է, որ մութ, որ մահ,

Մեծասասան ջրապտոյտ:

Եւ Ամպն ու Ովկիանոսը

Իրենց ահաւոր շքեղականծութեանց վերերէն

Կը ճանչնային, կուտային, կ'առատացնէին Սէրս,

Բաբելական աստուածներէն ով զիտէ դեռ որքա՜ն

առաջ.

Երբ դեռ անոնք հեռու էին իրենց ջրհեղեղէն,

Երբ դեռ անոնք չէին բարձրացած՝

Իրենց մթին աշխարհի չարաստուեր պարիսպներուն

վրայ

Ու կծկտած այնտեղ տխուր ու երկչոտ՝ նման,

Տասը հարիւր շունի:


* * *

Անձրս ինկաւ անձիս մէջ,

Դպաւ Գութին Աստծոյ,

Դպաւ Լոյսի եւ Սիրոյ,

Դպաւ շիտակ ալ ուղիղ...:




Յ Ա Ն Կ

1. — Ներքին Հասարակած	52 3
2. — Մուրացիանը	7
3. — Պահ մը Արձա Սպասէ՛ք	14
4. — Պզտիկ Խօսք	18
5. — Խօսք Ասոր Համար	22
6. — Կին մը	23
7. — Գաղաթնակէտ՝ Բաղձանքի մը Վաղանցուկ ...	28
8. — Գարնանամուտ ու Վերջ ,.	29
9. — Խօսք Բանաստեղծի	34
10. — Խառն Խօսքեր Հոգիի	39
11. — Ըսէ՛ք	42
12. — Յիշատակը Չայնիդ	45
13. — Սպասում	52
14. — Կը Սպասեմ	55
15. — Ծննդադահ	61

Վ Ր Ի Պ Ա Կ

Էջ	Վերին վար		կարգալ
	տող		
12	8րդ	«Ծաղկերէ»	մաղերէ:
14	6րդ	«Ճայռերու»	ժայռերու
21	6րդ	«աղնիւք»	աղօթք
22	10րդ	«չերկրորդութիւն»	չերկրորդութիւն
48	21րդ	«մարախլածիւր»	մառախլածիւր
61	19րդ	«ողնոյցք»	ողնոյցի
64	8րդ	«խորշումներն»	խորշումներուն
64	16րդ	«ողջ-կէշ»	ողջակէշ
72	18րդ	«ալքօլ ազդուած»	ալֆօլազուած





h.]

A $\frac{\pi}{79410}$

ԳԻՆ՝ 60 ՃԲԱՆՔ

Ստանալու համար դիմել՝

HOVHANNÈS BAITARIAN

Souk Sursock, Hôtel Dar-el-Srour

BEYROUTH (Liban)